

ՀԱՍՏԱՏՎԱԾ

Բանկի բաժնետերերի
Արտահերթ ընդհանուր ժողովում
12 նոյեմբերի 2009թ.-ին
Արձանագրություն թիվ 3
Ընդհանուր ժողովի
նախագահ
Մելիքյան Կորյունովա

Կորյունովա
(նախագահություն)



ԳՐԱՆՑՎԱԾ

Հայաստանի Հանրապետության
Կենտրոնական Բանկում
11.12.2009 թ. 31
Գրառման համարը
ՀՀ Կենտրոնական Բանկի
նախագահ
Արթուր Չավադյան

Չավադյան
(նախագահություն)



«ԲՍԱ ԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԴԵՐՈՒԹՅԱՆ
ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
(փոփոխված)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «ԲՏԱ ԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերությունը (ՓԲԸ) հանդիսանում է «ԲՏԱ ԻՆՎԵՍՏԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության իրավահաջորդը (որը փոխել է իր ֆիրմային անունը բաժնետերերի Ընդհանուր ժողովի 01 փետրվարի 2008թ. որոշմամբ), որն իր հերթին հանդիսացել է «ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՆՎԵՍՏԻՑԻՈՆ ԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության (ՓԲԸ) իրավահաջորդը (որը փոխել է իր ֆիրմային անունը բաժնետերերի Ընդհանուր ժողովի 16 մայիսի 2005թ. որոշմամբ):

«ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՆՎԵՍՏԻՑԻՈՆ ԲԱՆԿ» (ՓԲԸ) իր հերթին, հանդիսանում է վերակազմավորված «Սևան Բանկ» ՓԲԸ-ի իրավահաջորդը, որը կազմավորվել է բանկի հիմնադիրների (փայտատերերի) ընդհանուր ժողովի որոշմամբ 01 հունիսի 1991թ. Հիմնադիր պայմանագրի համաձայն:

1.2. «ԲՏԱ ԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության (հետագայում՝ Բանկ) սույն Կանոնադրությունը մշակված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի, «Բաժնետիրական ընկերությունների մասին» և «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքների և այլ նորմատիվ և օրենսդրական ակտերի համաձայն:

1.3. Իր գործունեությունն իրականացնելիս Բանկը ղեկավարվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, ՀՀ օրենքներով, ՀՀ կենտրոնական բանկի որոշումներով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:

Սույն Կանոնադրության պահանջները պարտադիր են բանկի բոլոր բաժնետերերի, կառավարման մարմինների և աշխատողների համար:

1.4 Բանկը համարվում է ստեղծված և ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ ՀՀ Կենտրոնական Բանկում գրանցվելու պահից և իրավունք ունի իրականացնել բանկային գործունեություն և օրենսդրությամբ սահմանված ֆինանսական գործառնություններ՝ ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից բանկային գործունեություն իրականացնելու լիցենզիա ստանալու պահից:

1.5 Բանկը որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, ինքնուրույն հաշվեկշիռ, թղթակցային հաշիվ ՀՀ Կենտրոնական Բանկում, ապրանքանիշ (սպասարկման նիշ), որը գրանցված է օրենքով սահմանված կարգով, կարող է իր անունից ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ և կրել պարտականություններ, հանդես գալ, որպես հայցվոր և պատասխանող դատական մարմիններում, ինչպես նաև իրականացնում է այլ գործողություններ, որոնք չեն հակասում ՀՀ գործող օրենսդրությանը:

Բանկն ունի իր անվամբ և խորհրդանիշով կլոր կնիք, համարային կնիքներ բանկի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների համար:

1.6 Բանկի իրավաբանական հասցեն. Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Նալբանդյան 48/1:

1.7. Բանկի լրիվ ֆիրմային անվանումը՝

հայերեն՝ «ԲՏԱ ԲԱՆԿ» Փակ Բաժնետիրական Ընկերություն

ռուսերեն՝ Закрытое акционерное общество «БТА БАНК»

անգլերեն՝ «BTA BANK» Joint Stock Company

1.7.1. Բանկի կրճատ ֆիրմային անվանումը՝

հայերեն՝ «ԲՏԱ Բանկ» ՓԲԸ

ռուսերեն՝ ЗАО «БТА Банк»

անգլերեն՝ «BTA Bank» CJSC

1.8 Բանկի կազմակերպատիրական ձևն է փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ):

1.9 Սույն կանոնադրության մեջ կատարված փոփոխությունները ենթակա են գրանցման ՀՀ Կենտրոնական Բանկում՝ վերջինիս կողմից սահմանված կարգով:

ԲԱԺԻՆ 2. ԲԱՆԿԻ ՍԱՄՆԱՃՅՈՒՄԵՐԸ, ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԸ

2.1 Բանկը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում կարող է հիմնել իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող մասնաճյուղեր, ներկայացուցչություններ և հիմնարկներ, որոնք Հայաստանի Հանրապետության տարածքում հիմնելու դեպքում գրանցվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, իսկ արտասահմանում՝ տվյալ երկրի օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Կենտրոնական բանկի համաձայնությամբ:

2.2 Ընկերության մասնաճյուղը՝ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող Բանկի գտնվելու վայրից դուրս գտնվող առանձնացված ստորաբաժանում է, որը գործում է Բանկի կողմից

տրված լիազորությունների սահմաններում և նրա անունից բանկային գործունեություն և (կամ) օրենքով սահմանված ֆինանսական գործառնություններ է իրականացնում:

Բանկի ներկայացուցչությունը՝ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող և Բանկի գտնվելու վայրից դուրս գտնվող առանձնացված ստորաբաժանումն է, որը ներկայացնում է Բանկը, ուսումնասիրում է ֆինանսական շուկան, Բանկի անունից կնքում է պայմանագրեր, իրականացնում է համանման այլ գործառնություններ: Ներկայացուցչությունը բանկային գործունեություն և (կամ) օրենքով սահմանված ֆինանսական գործառնություններ իրականացնելու իրավունք չունի:

Բանկի հիմնարկը՝ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող Բանկի ստեղծած կազմակերպությունն է, որն իրականացնում է ոչ առևտրային բնույթի գործունեություն:

2.3 Բանկի տարածքային (առանձնացված) ստորաբաժանումները և հիմնարկները գործում են Բանկի կողմից հաստատված կանոնադրությունների հիման վրա:

2.4 Բանկի տարածքային (առանձնացված) ստորաբաժանումների ստեղծումը, գրանցումը և գործունեության դադարումը, այդ թվում՝ ժամանակավորապես դադարեցումը, իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

2.5 Բանկի տարածքային (առանձնացված) ստորաբաժանումների գույքը տրամադրում է Բանկը, որը հաշվառվում է ինչպես դրանց առանձին հաշվեկշիռներում, այնպես էլ Բանկի հաշվեկշռում:

Բանկի հիմնարկը, օրենքով սահմանված շրջանակներում, իր գործունեության նպատակներին, Բանկի հանձնարարություններին և իրեն ամրացված գույքի նշանակությանը համապատասխան, տիրապետում, օգտագործում և տնօրինում է այդ գույքը:

2.6 Բանկի տարածքային (առանձնացված) ստորաբաժանումների և հիմնարկների ղեկավարները հանդիսանում են Բանկի ղեկավար անձինք, նշանակվում են Բանկի գործադիր տնօրենի (վարչության նախագահի) կողմից և գործում են Բանկի կողմից տրված լիազորագրերի հիման վրա:

2.7 Բանկի տարածքային (առանձնացված) ստորաբաժանումների և հիմնարկների ստեղծման մասին որոշումներն ընդունվում են Բանկի Խորհրդի կողմից: Բանկի տարածքային (առանձնացված) ստորաբաժանումը հիմնադրված է համարվում Կենտրոնական բանկի կողմից գրանցման պահից, իսկ հիմնարկը՝ խորհրդի որոշման ընդունման պահից:

2.8 Բանկի տարածքային (առանձնացված) ստորաբաժանումները և հիմնարկները գործում են Բանկի անունից: Մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում Բանկը:

3. ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ

3.1 Բանկային գործունեություն իրականացնելու իրավունքի լիցենզիայի համաձայն Բանկն իրավունք ունի կատարել բոլոր ֆինանսական գործառնությունները ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների հետ ՀՀ օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով, այդ թվում.

- ընդունել ցպահանջ, ժամկետային ավանդներ;
- տրամադրել առևտրային և սպառողական վարկեր, այդ թվում՝ տալ հիփոթեքային վարկեր, իրականացնել պարտքի կամ առևտրային գործարքների ֆինանսավորում, ֆակտորինգ;
- տրամադրել բանկային երաշխիքներ և ակրեդիտիվներ (վարկային նամակներ);
- բացել և վարել հաշիվներ, այդ թվում՝ այլ բանկերի թղթակցային հաշիվներ;
- մատուցել այլ վճարահաշվարկային ծառայություններ և (կամ) այլ կերպ սպասարկել հաճախորդների հաշիվները;
- թողարկել, գնել (գեղչել), վաճառել և սպասարկել արժեթղթեր, վճարային փաստաթղթեր, ճանապարհային չեկեր, քարտեր և այլ գործիքներ, կատարել նման այլ գործառնություններ;
- իրականացնել ինվեստիցիոն (ներդրումային) և բաժանորդագրական գործունեություն;
- մատուցել ֆինանսական գործակալի (ներկայացուցչի) ծառայություններ, կառավարել այլ անձանց արժեթղթերը և ներդրումները, հավատարմագրային (լիազորագրային) կառավարում;
- գնել, վաճառել և կառավարել բանկային ոսկի և ստանդարտացված ձուլակտորներ և հուշադրամ;
- գնել և վաճառել (փոխանակել) արտարժույթ, այդ թվում՝ կնքել դրամի և արտարժույթի ֆյուչերսներ, օպցիոններ և նման գործարքներ;
- իրականացնել ֆինանսական վարձակալություն (լիզինգ);
- ի պահ ընդունել թանկարժեք մետաղներ, քարեր, ոսկերչական իրեր, արժեթղթեր, փաստաթղթեր և այլ արժեքներ;
- մատուցել ֆինանսական և ինվեստիցիոն խորհրդատվություն;

- ստեղծել և սպասարկել հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգ, իրականացնել պարտքերի հետ ստացման գործունեություն;

- իրացնել ապահովագրական վկայակցեր և /կամ/ պայմանագրեր, օրենքով սահմանված կարգով իրականացնել ապահովագրական գործակալի գործառնություններ:

3.2. Բանկը նշված գործառնությունները կատարում է ինչպես ՀՀ դրամով, այնպես էլ արտարժույթով:

3.3. Բանկն իրավունք ունի իր անունից կնքել պայմանագրեր, ձեռք բերել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտավորություններ, լինել հայցվոր և պատասխանող դատարանում:

3.4. Առանց Կենտրոնական բանկի նախնական համաձայնության բանկին արգելվում է այնպիսի գործարքներ կամ գործառնություններ իրականացնելը, որոնց արդյունքում բանկի մասնակցությունը`

ա) մեկ այլ անձի կանոնադրական հիմնադրամում 4,99 % և ավելի մասնակցություն է,

բ) մեկ այլ անձի կանոնադրական հիմնադրամում գերազանցում է բանկի ընդհանուր կապիտալի 15 %,

գ) բոլոր անձանց կանոնադրական հիմնադրամներում գերազանցում է բանկի ընդհանուր կապիտալի 35%:

3.5. Բանկն իրավունք ունի թղթակցային հաշիվներ բացել այլ բանկերում:

3.6. Բանկն ինքն է որոշում ներգրավող ավանդների, տրամադրվող վարկերի, իր կողմից թողարկված արժեթղթերի տոկոսադրույքները և միջնորդավճարների չափը:

3.7. Բանկը երաշխավորում է իր հաճախորդների և թղթակցող բանկերի ավանդների և գործառնությունների գաղտնիությունը և ամբողջականության պահպանումը:

3.8. Բանկում գտնվող հաճախորդների դրամական միջոցների (ներառյալ քաղաքացիների ավանդները) և այլ գույքի վրա կարող է կալանք և արգելանք դրվել և բռնազանձում տարածվել միայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.9. Բանկն իր պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքով (միջոցներով), եթե այլ բան նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

4. ԲԱՆԿԻ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԳՐԱՄԸ, ԲԱՆԿԻ ՀԻՄՆԱԳՐԱՄՆԵՐ

4.1. Բանկի կանոնադրական կապիտալը կազմում է 6 520 000 000 /վեց միլիարդ հինգ հարյուր քսան միլիոն/ ՀՀ դրամ, այդ թվում 5953 /հինգ հազար ինը հարյուր հիսուներեք/ հատ հասարակ /տվորական/ բաժնետոմս՝ 5 953 000 000 /Հինգ միլիարդ ինը հարյուր հիսուն երեք միլիոն/ ՀՀ դրամ ընդհանուր անվանական արժեքով և 567 /Հինգ հարյուր վաթսույն յոթ/ հատ արտոնյալ բաժնետոմս /փոփոխական շահութաբաժիններով բաժնետոմսեր / 567 000 000 / Հինգ հարյուր վաթսույն յոթ միլիոն/ ՀՀ դրամ ընդհանուր արժեքով:

Մեկ /յուրաքանչյուր/ բաժնետոմսի /հասարակ, արտոնյալ/ անվանական արժեքը կազմում է 1.000.000 /Մեկ միլիոն/ ՀՀ դրամ:

4.2 Բանկի փաստացի վճարված կանոնադրական հիմնադրամի նվազեցումն արգելվում է, բացառությամբ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված դեպքերի:

4.3 Բանկի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն Բանկից պահանջելու մասնակցության հետզանձան գնի որոշում և իրենց պատկանող բաժնետոմսերի կամ դրանց մի մասի հետզանձում, եթե`

ա) որոշում է ընդունվել Բանկի վերակազմակերպման, նախապատվության իրավունքի կասեցման կամ խոշոր գործարք կնքելու մասին, և տվյալ բաժնետերերը քվեարկել են Բանկի վերակազմակերպման, նախապատվության իրավունքի կասեցման կամ խոշոր գործարք կնքելու դեմ կամ այդ հարցերով քվեարկությանը չեն մասնակցել:

բ) Բանկի կանոնադրության մեջ լրացումներ կամ փոփոխություններ են կատարվել, կամ հաստատվել է կանոնադրությունը նոր խմբագրությամբ, որի հետևանքով սահմանափակվել են նշված բաժնետերերի իրավունքները, և նրանք դեմ են քվեարկել կամ քվեարկությանը չեն մասնակցել:

4.4 Բանկից իրենց մասնակցության հետզանձան պահանջի իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմվում է Բանկի բաժնետերերի ռեեստրի տվյալների հիման վրա, այն Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ, որի օրակարգը պարունակում է հարցեր, որոնց ընդունումը հանգեցրել է բաժնետերերի իրավունքների` 4.3 կետում նշված սահմանափակմանը:

4.5 Բանկի կողմից մասնակցության հետզնումը կատարվում է դրա շուկայական արժեքով, որը որոշվում է առանց մասնակցության գնահատման և հետզնման պահանջի իրավունք տվող Բանկի գործողությունների հետևանքով առաջացող փոփոխությունները հաշվի առնելու:

Մասնակցության հետզնումը կատարվում է Կենտրոնական բանկի Խորհրդի համաձայնությամբ:

4.6 Բանկի կողմից իր բաժնետոմսերը հետ գնելու դեպքում Կանոնադրական հիմնադրամի նվազեցման կամ տվյալ բաժնետոմսերի իրացման մասին որոշումն ընդունվում է Ընդհանուր ժողովի կողմից՝ դրան մասնակցող քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով, սակայն ոչ պակաս քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 2/3-ից:

4.7 Բանկի կանոնադրական հիմնադրամի չափը կարող է ավելացվել Ընդհանուր ժողովի որոշմամբ: Բանկի կանոնադրական հիմնադրամը կարող է ավելացվել բաժնետոմսերի անվանական արժեքը մեծացնելու կամ լրացուցիչ բաժնետոմսեր տեղաբաշխելու միջոցով:

4.8 Բանկում ստեղծվում է պահուստային հիմնադրամ (գլխավոր պահուստ) փաստացի համալրված Կանոնադրական հիմնադրամի 15 տոկոսի չափով, որը ձևավորվում է Բանկի զուտ շահույթի հաշվին, Ընդհանուր ժողովի կողմից սահմանված չափերով յուրաքանչյուր տարի կատարվող մասհանումների միջոցով, բայց ոչ պակաս, քան Բանկի զուտ շահույթի 5 տոկոսի չափով, մինչև սահմանված չափերին հասնելը:

4.9 Պահուստային հիմնադրամի ձևավորման կարգը որոշվում է Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից: Բանկի Պահուստային հիմնադրամի օգտագործման կարգը որոշվում է Բանկի Խորհրդի կողմից:

4.10 Բանկի բաժնետերերի Ընդհանուր ժողովի որոշմամբ կարող են ստեղծվել նաև այլ հիմնադրամներ, որոնք նպատակ ունեն նպաստել Բանկի տնտեսական զարգացմանը և Բանկի աշխատողների սոցիալ-տնտեսական պահանջումքների բավարարմանը, որոնց ձևավորումը, հատկացումների կարգը և չափերը որոշվում են Ընդհանուր ժողովի կողմից:

5. ԲԱՆԿԻ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԸ

5.1 Բանկի բաժնետոմսը արժեթուղթ է, որը հավաստում է դրա տիրոջ (բաժնետիրոջ)՝ Բանկի շահույթից շահութաբաժնի ձևով մաս ստանալու, Բանկի կառավարմանը մասնակցելու, օրենքներով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով Բանկի ընդհանուր ժողովի իրավասության ենթակա հարցերի վերաբերյալ որոշումներ կայացնելու, բանկի գործունեության վերաբերյալ անհրաժեշտ տեղեկություններ ստանալու և նրա լուծարումից հետո մնացած գույքից մաս ստանալու իրավունքը: Բանկը կարող է թողարկել հասարակ (սովորական), ինչպես նաև մեկ կամ մի քանի տեսակի արտոնյալ բաժնետոմսեր: Բանկի թողարկած արտոնյալ բաժնետոմսերի ընդհանուր անվանական արժեքը չի կարող գերազանցել Բանկի Կանոնադրական հիմնադրամի 25 տոկոսը:

5.2 Բանկի բաժնետոմսերը բաժնետերերի կամ նախօրոք որոշված անձանց շրջանակի միջև տեղաբաշխվում են փակ բաժանորդագրության ձևով: Բանկը թողարկում է ոչ փաստաթղթային ձևի անվանական բաժնետոմսեր: Բանկի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի առավելագույն չափ չի սահմանվում:

5.3 Բանկի բաժնետոմսերի կամ այլ արժեթղթերի շուկայական արժեքի որոշման անհրաժեշտության դեպքում հաշվի են առնվում այդ բաժնետոմսերի ձեռքբերման, ինչպես նաև առաջարկի և պահանջարկի գներին վերաբերող և համապատասխան զանգվածային լրատվության միջոցներում պարբերաբար հրապարակվող տեղեկությունները:

Բանկի հասարակ (սովորական) բաժնետոմսերի շուկայական արժեքի որոշման դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել Բանկի զուտ ակտիվների (հիմնական կապիտալի) արժեքը, ինչպես նաև այն գինը, որը Բանկի բոլոր տեղաբաշխված հասարակ (սովորական) արժեթղթերի համար համաձայն է վճարել Բանկի գույքի մասին լրիվ տեղեկություններ ունեցող գնորդը, ինչպես նաև այլ գործոններ, որոնք Բանկի գույքի շուկայական արժեքը սահմանող մարմինը (անձը) կհամարի կարևոր:

Սույն կետով որոշվող և թողարկված հասարակ (սովորական) բաժնետոմսերի շուկայական արժեքը չի կարող պակաս լինել այն գնից, որը հաշվարկվել է՝ Բանկի զուտ ակտիվների (հիմնական կապիտալի) արժեքը հիմք ընդունելով:

5.4 Բաժնետոմսերի ձեռք բերման դիմաց որպես վճարման միջոց կարող է օգտագործվել միայն հայկական դրամը: Թողարկվող բաժնետոմսերը կարող են ձեռք բերվել նաև դրանք բաժնետոմսերի փոխարկվող պարտատոմսերով փոխարկելու միջոցով:

5.5 Թողարկվող բաժնետոմսերի ձեռք բերման դիմաց վճարում կարող է կատարվել վճարման միանվագ կամ տարաժամկետ եղանակով, ըստ բաժնետոմսերի թողարկման որոշման: Բանկի մեկ սովորական բաժնետոմսը դրա սեփականատիրոջը տալիս է Ընդհանուր ժողովում մեկ ձայնի իրավունք:

5.6 Բաժնետոմսերի սեփականատերերի ռեեստրի վարումը և պահպանումը իրականացնում է Կենտրոնական Դեպոզիտարիան: Բանկի բաժնետոմսերի սեփականատերերի փոփոխման դեպքում նոր սեփականատիրոջ իրավունքները ծագում են, իսկ նախորդինը դադարեցվում են Բանկի սեփականատերերի ռեեստրում համապատասխան փոփոխության և դրա գրանցման պահից:

5.7 Բանկի բաժնետոմսերի լրացուցիչ տեղաբաշխման դեպքում Բանկի բաժնետերերն ունեն Բանկի տեղաբաշխող բաժնետոմսերի ձեռք բերման նախապատվության իրավունք՝ Բանկի կանոնադրական հիմնադրամում իրենց փայերին համամասնորեն:

5.8 Բանկի քվեարկող բաժնետոմսերի սեփականատերեր հանդիսացող բաժնետերերը պետք է Բանկի վճարմանը ենթակա բաժնետոմսերի կամ քվեարկող բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի բաշխման սկսման օրվանից ոչ պակաս քան 30 օր և ոչ ավել քան 60 առաջ ծանուցվեն նախապատվության իրավունքի իրականացման հնարավորության վերաբերյալ:

Ծանուցումը, որը բաժնետերերին տրամադրվում է պատվիրված մամակով կամ բաժնետիրոջը (բաժնետիրոջ ներկայացուցչին) առձեռն, պետք է պարունակի Օրենքով սահմանված տեղեկություններ: Բաժնետերերը իրավունք ունեն իրականացնել իրենց նախապատվության իրավունքը լրիվ ծավալով կամ մասնակիորեն՝ քվեարկող բաժնետոմսերի ձեռք բերման մասին Բանկին գրավոր ծանուցում ուղարկելու միջոցով, որը պետք է պարունակի տեղեկություններ բաժնետերերի լրիվ ֆիրմային անվանման, պետական գրանցման և գտնվելու վայրի (ֆիզիկական անձանց դեպքում՝ անվան, անձնագրային տվյալների և բնակության վայրի), ինչպես նաև ձեռք բերվող բաժնետոմսերի քանակի վերաբերյալ, ինչպես նաև այլ՝ Օրենքով սահմանված տեղեկություններ: Իր՝ Բանկի բաշխվող բաժնետոմսերի ձեռք բերման նախապատվության իրավունքի իրացման մասին գրավոր ծանուցմանը պետք է կցված լինի նաև փաստաթուղթ՝ բաժնետոմսերի վճարման վերաբերյալ: Բանկին գրավոր ծանուցումը պետք է ներկայացվի բաշխման ժամկետի օրվանից ոչ ուշ, քան 1 օր առաջ:

Լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման դեպքում տեղաբաշխման ժամկետը և բաժնետոմսերի վճարման վերջնական ժամկետը, ինչպես նաև սույն գործընթացի հետ կապված այլ ժամկետները, սահմանվում են բաժնետերերի Ընդհանուր ժողովի որոշմամբ:

5.9 Բաժնետերերի Բանկի բաժնետոմսերի ձեռք բերման նախապատվության իրավունքը (Բանկի կանոնադրական հիմնադրամում իրենց փայերին համամասնորեն) պետք է պահպանվի Բանկի այլ բաժնետերերի բաժնետոմսերի վաճառքի դեպքում (հատուցվող գործարք):

Բանկի որևէ բաժնետիրոջ բաժնետոմսերի վաճառքի դեպքում, բանկի այլ բաժնետերերը կարող են բաժնետոմսերի վաճառքի մասին գրավոր ծանուցման ստանալու պահից 30 օրվա ընթացքում իրականացնել վաճառվող բաժնետոմսերի ձեռք բերման իրենց նախապատվության իրավունքը Բանկի կանոնադրական հիմնադրամում իրենց փայերին համամասնորեն, ծանուցման մեջ նշված ժամկետում բաժնետոմսերի դիմաց վճարման միջոցով:

Բաժնետերերի Բանկի բաժնետոմսերի ձեռք բերման նախապատվության իրավունքը չի տարածվում բաժնետոմսերի ձեռք բերմանը նվիրման միջոցով, օտարման գործարքների, ինչպես նաև բաժնետոմսերի իրավաբանական անձի ժառանգորդներին կամ իրավահաջորդներին փոխանցման դեպքում:

6. ԲԱՆԿԻ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԸ ԵՎ ԱՅԼ ԱՐԺԵԹՂԹԵՐԸ

6.1 Բանկը կարող է տեղաբաշխել անվանական կամ ըստ ներկայացնողի պարտատոմսեր:

6.2 Բանկի պարտատոմսերի և այլ արժեթղթերի թողարկումը կատարվում է Խորհրդի որոշմամբ, որում սահմանվում են պարտատոմսերի մարման ձևը, ժամկետները և պայմանները:

Պարտատոմսերի և այլ արժեթղթերի թողարկումն ու տեղաբաշխումն իրականացվում է «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

6.3 Բանկի կողմից թողարկված բոլոր ապահովված պարտատոմսերի անվանական արժեքների գումարը չի կարող գերազանցել Բանկի Կանոնադրական հիմնադրամի մեծությունը կամ այն ապահովման գումարը, որը տրամադրված է Բանկին պարտատոմսեր թողարկելու նպատակով:

Բանկը կարող է թողարկել միաժամանակյա, ինչպես նաև տարաժամկետ (Բանկի կողմից սահմանված ժամկետային հաջորդականությամբ) մարման ժամկետով պարտատոմսեր:

6.4 Պարտատոմսեր կարող է թողարկվել միայն Բանկի հայտարարված Կանոնադրական հիմնադրամի լրիվ վճարումից հետո:

6.5 Բանկն իրավունք ունի թողարկել նաև մուրհակներ, չեկեր, բանկային վկայագրեր և օրենսդրությամբ նախատեսված այլ արժեթղթեր: Բանկի կողմից թողարկված պարտատոմսերի վաղաժամկետ մարման հնարավորություն դրանց սեփականատերերին չի ընձեռվում:

7. ԲԱՆԿԻ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԸ

71. Բանկի բաժնետերեր կարող են լինել Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ քաղաքացիներ և իրավաբանական անձինք:

7.2. Բանկը պատասխանատվություն չի կրում իր բաժնետերերի պարտավորությունների համար, եթե այդպիսիք չի ստանձնել որպես երրորդ անձ կամ երաշխավոր: Բանկի բաժնետերերը Բանկի գործունեության արդյունքում գոյացած վնասների համար պատասխանատվություն են կրում իրենց կողմից բաժնետոմսերի դիմաց վճարված գումարով: Բաժնետոմսերի դիմաց վճարումները ոչ լրիվ կատարած բաժնետերը Բանկի պարտավորությունների համար կրում է համապարտ պարտավորություն մաս բաժնետոմսերի դիմաց իր կողմից չվճարված գումարի սահմաններում:

7.3. Բանկին պարտադիր ցուցում տալու կամ նրա գործողություններն այլ ձևերով կանխորոշելու հնարավորություն ունեցող բաժնետերերի ուղղակի կամ անուղղակի գործողությունների հետևանքով Բանկի սնանկության դեպքում այդ անձինք Բանկի պարտավորությունների համար կրում են սուբսիդիար պատասխանատվություն: Սուբսիդիար պատասխանատվություն որոշելու հայցով դատարան կարող են դիմել ՀՀ կենտրոնական բանկը և լուծարային կառավարիչը:

7.4. Բանկի բաժնետերերի թիվը չի կարող ավելի լինել, քան ՀՀ օրենսդրությամբ սահմանված քանակը:

7.5. Ընդհանուր ժողովում ձայնի իրավունքից օգտվում են միայն լրիվ վճարված սովորական բաժնետոմսի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը: Արտոնյալ բաժնետոմսերի բաժնետերերը ձայնի իրավունք ունեն ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում:

7.6. Բանկի բաժնետերը պարտավոր է՝

ա) բաժնետոմսերի թողարկման որոշմամբ սահմանված ժամկետներում լրիվ վճարել իր բաժնետոմսերի արժեքը.

բ) չիրապարակել Բանկի գործունեության վերաբերյալ գաղտնիք ներկայացնող տեղեկությունները.

գ) ենթարկվել օրենքի, այլ իրավական ակտերի և սույն կանոնադրության պահանջներին:

7.7. Եթե լրացուցիչ տեղաբաշխվող բաժնետոմսերի ձեռք բերման ժամանակ տեղաբաշխման մասին որոշմամբ սահմանված ժամկետներում բաժնետոմսերի լրիվ արժեքի վճարումը չի կատարվել, իսկ վճարված գումարը մեկ համապատասխան բաժնետոմսի արժեքից պակաս է, ապա բաժնետոմսերը փոխանցվում են Բանկի տրամադրության տակ և դրանց արժեքը ժամանակին չվճարած բաժնետերերը զրկվում են բաժնետոմսերի նկատմամբ սեփականության իրավունքից: Այդ մասին կատարվում է նշում Բանկի բաժնետերերի ռեեստրում, իսկ դրամական միջոցները, որոնք վճարվել են բաժնետոմսերի դիմաց, բաժնետիրոջը չեն վերադարձվում:

7.8. Եթե լրացուցիչ տեղաբաշխվող բաժնետոմսերի ձեռքբերման ժամանակ տեղաբաշխման մասին որոշմամբ սահմանված ժամկետներում բաժնետոմսերի լրիվ արժեքի վճարումը չի կատարվել, իսկ վճարված գումարը մեկ համապատասխան բաժնետոմսի արժեքից պակաս չէ, ապա կատարվում է բաժնետոմսերի քանակի վերահաշվարկ, այնպես, որ բաժնետոմսերի քանակի և ձեռքբերման արժեքի արտադրյալը չգերազանցի դրանց համար արդեն վճարված գումարը: Մնացած բաժնետոմսերը փոխանցվում են Բանկի տրամադրության տակ և բաժնետերերը զրկվում են բաժնետոմսերի նկատմամբ սեփականության իրավունքից: Այդ մասին կատարվում է նշում Բանկի բաժնետերերի ռեեստրում:

7.9. Բանկի հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերն իրավունք ունի՝

ա) անձամբ կամ ներկայացուցչի կամ իր բաժնետոմսերի անվանատիրոջ միջոցով մասնակցել Ընդհանուր ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով.

բ) անձամբ կամ ներկայացուցչի կամ իր բաժնետոմսերի անվանական սեփականատիրոջ միջոցով մասնակցել Բանկի կառավարմանը.

գ) ստանալ շահութաբաժիններ Բանկի գործունեությունից առաջացած շահույթից.

դ) առաջնահերթ կարգով ձեռք բերել Բանկի կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերը.

ե) ստանալ Բանկի գործունեության վերաբերյալ տեղեկատվություն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածին համապատասխան,

զ) Ընդհանուր ժողովներում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի.

է) հանդես գալ Ընդհանուր ժողովներում առաջարկություններով.

ը) Ընդհանուր ժողովներում քվեարկել իրեն պատկանող բաժնետոմսերի ձայների չափով.

թ) դիմել դատարան՝ Ընդհանուր ժողովի կողմից ընդունված և գործող օրենքներին ու այլ իրավական ակտերին հակասող որոշումների բողոքարկման նպատակով.

ժ) Բանկի լուծարման դեպքում ստանալ Բանկի գույքի (միջոցների) իրեն հասանելիք մասը.

ի) մյուս բաժնետերերի կողմից գնման նախապատվության իրավունքից հրաժարվելու դեպքում օտարել իր սեփականությունը հանդիսացող բաժնետոմսերը.

լ) կատարել օրենսդրությամբ իրեն վերապահված այլ գործողություններ:

7.10. Բանկի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերն իրավունք ունի՝

ա) մասնակցել ժողովին՝ ձայնի իրավունքով, օրենքով նախատեսված դեպքերում

բ) ստանալ շահութաբաժիններ՝ Բանկի գործունեությունից առաջացած շահույթից

գ) ձեռք բերել Բանկի կողմից տեղաբաշխվող բաժնետոմսեր սույն կանոնադրությամբ սահմանված կարգով.

դ) ժողովներում հանդես գալ առաջարկություններով.

ե) ժողովներում քվեարկել իրեն պատկանող բաժնետոմսերի ձայների չափով, օրենքով նախատեսված դեպքերում:

7.11 Բանկի բաժնետերերը կարող են փոփոխվել սույն կանոնադրությամբ և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ բաժնետերերի բաժնետոմսերի օտարման միջոցով, Բանկի բաժնետերերի կազմում նոր բաժնետերերի ընդգրկմամբ, ինչպես նաև բաժնետիրոջ (բաժնետերերի) ամբողջ բաժնետոմսերի վրա բռնազանձում տարածելու դեպքում:

7.12 Բանկը հասարակ բաժնետոմսերի սեփականատեր բաժնետերերին չի երաշխավորում հասարակ բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինների վճարումները:

7.13 Եթե Բանկի բոլոր բաժնետերերը միաժամանակ ցանկություն են հայտնել վաճառելու իրենց բաժնետոմսերը կամ նրանց մի մասը, ապա նախապատվության իրավունքի իրականացման ժամկետ չի սահմանվում: Տվյալ դեպքում Բանկն իրավունք ունի ձեռք բերելու բաժնետոմսերը սեփականատիրոջ հետ համաձայնեցված գնով: Բանկի՝ ձեռք բերման վերաբերյալ բացասական որոշում կայացնելու, կամ բաժնետոմսերի գնի վերաբերյալ համաձայնության չգալու դեպքում, այդ բաժնետոմսերը կարող են վաճառվել երրորդ անձանց:

7.14 Բանկի Կանոնադրական հիմնադրամում բաժնետիրոջ բաժնետոմսի վրա ՀՀ հետագայում գրավառուի կողմից դրանց վրա բռնազանձում տարածելն իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.15 Բանկի Կանոնադրական հիմնադրամում բաժնետիրոջ բաժնետոմսի վրա ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով և դեպքերում բռնազանձում տարածվելու կամ արտադատական կարգով գրավառուին ի սեփականություն հանձնելու ժամանակ նախապատվության իրավունքի կիրառման հարցը որոշվում է ՀՀ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված կարգով:

8. ԲԱՆԿԻ ՇԱՀՈՒՅՔԻ ԲԱՇԽՈՒՄԸ

8.1 Ջուտ շահույթի բաշխումն իրականացվում է Ընդհանուր ժողովի կողմից սահմանված հիմնադրամների համալրման, սովորական բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինների վճարման նպատակով կամ կարող են հաշվառվել որպես նախորդ տարիների չբաշխված շահույթ:

8.2 Բանկն իրավունք ունի որոշում ընդունելու (հայտարարելու) իր բաժնետերերին տարեկան շահութաբաժինների վճարման մասին:

Տարեկան շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունում է Ընդհանուր ժողովը՝ խորհրդի առաջարկությամբ:

Ընդհանուր ժողովն իրավունք ունի որոշում ընդունելու շահութաբաժիններ չվճարելու, իսկ արտոնյալ բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինները ոչ լրիվ չափով վճարելու մասին:

8.3 Տարեկան շահութաբաժինների վճարման ժամկետը սահմանվում է Ընդհանուր ժողովի՝ շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ:

Շահութաբաժինների յուրաքանչյուր վճարման համար խորհուրդը կազմում է շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակ, որում պետք է ընդգրկվեն Բանկի այն բաժնետերերը, որոնք ընդգրկվել են Բանկի բաժնետերերի ռեեստրում՝ Բանկի բաժնետերերի տարեկան Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ:

8.4 Բանկի բաժնետերերին շահութաբաժիններ բաշխելն արգելվում է, եթե այդ պահին բանկի կրած կորուստները (վնասները) հավասար են կամ գերազանցում են Բանկում առկա չբաշխված զուտ շահույթի գումարը:

8.5 Շահութաբաժիններ վճարելու մասին Ընդհանուր ժողովի որոշմամբ սահմանված ժամկետներում շահութաբաժիններ չվճարվելու դեպքում դրանք կուտակվում և վճարվում են հետագայում բաժնետիրոջ առաջին իսկ պահանջով:

8.6 Բանկի տեղաբաշխված արտոնյալ, փոփոխական շահութաբաժնով բաժնետոմսերի դիմաց վճարվող շահութաբաժնի չափը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$D=N*5\%+[(P-N*5\%*n)/n]*5\%$$

որտեղ՝

D-թողարկված և տեղաբաշխված մեկ արտոնյալ բաժնետոմսի դիմաց վճարվող տարեկան

շահութաբաժնի չափն է,

N-թողարկված և տեղաբաշխված մեկ արտոնյալ բաժնետոմսի անվանական արժեքն է,
P-Բանկի յուրաքանչյուր ֆինանսական տարվա արդյունքում ձևավորված գուտ (հարկերը և պարտադիր վճարները պահելուց հետո) շահույթի չափն է,
n-թողարկված և տեղաբաշխված արտոնյալ բաժնետոմսերի ընդհանուր քանակն է

9. ԽՈՇՈՐ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿՆՔՈՒՄԸ: ԳՈՒՅՔԻ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ԱՐԺԵՔԻ ՈՐՈՇՈՒՄԸ: ԲԱՆԿԻ ԳՈՐԾԱՐՔՆԵՐՈՒՄ ՇԱՀԱԳՐԳՈՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ:

9.1 Խոշոր գործարք կնքելու մասին որոշումը, որի առարկա հանդիսացող գույքը և որի արժեքը գործարքը կնքելու մասին որոշումն ընդունելու պահի դրությամբ կազմում է Բանկի ակտիվների հաշվեկշռային արժեքի 25-ից 50 տոկոսը, ընդունվում է խորհրդի կողմից միաձայն: Եթե գործարք կնքելու մասին որոշումը խորհրդի կողմից չի ընդունվել, ապա խորհուրդն իրավունք ունի որոշում ընդունելու՝ հարցը Ընդհանուր ժողովում քննարկելու մասին:

9.2 Սույն կանոնադրության 9.1 կետով սահմանված դեպքում, ինչպես նաև եթե գործարքի առարկա հանդիսացող գույքի արժեքը գործարքը կնքելու մասին որոշումն ընդունելու պահի դրությամբ կազմում է Բանկի ակտիվների հաշվեկշռային արժեքի 50 տոկոսից ավելին, ապա գործարքը կնքելու մասին որոշումն ընդունվում է Ընդհանուր ժողովի կողմից՝ դրան մասնակցող բաժնետերերի (քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի) ձայների 3/4-ով:

9.3 Գույքի, այդ թվում՝ օրենքով սահմանված խոշոր գործարքի առարկա հանդիսացող գույքի, շուկայական արժեքը որոշվում է խորհրդի որոշմամբ, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի, երբ շուկայական արժեքը որոշվում է դատարանի, այլ մարմնի կամ անձի կողմից:

9.4 Եթե մեկ կամ մի քանի գործարքներում, որոնց համար պահանջվում է սահմանել գույքի շուկայական արժեք, շահագրգիռ անձ է հանդիսանում խորհրդի անդամը, ապա գույքի շուկայական արժեքը սահմանվում է Խորհրդի այն անդամների որոշմամբ, որոնք չունեն շահագրգռվածություն նշված գործարքում:

9.5 Գույքի շուկայական արժեքի որոշման համար՝ անկախ գնահատողի ծառայություններից Բանկը կարող է օգտվել խորհրդի որոշմամբ:

9.6 Անկախ գնահատողի կողմից գույքի շուկայական արժեքի որոշումը պարտադիր է սույն կանոնադրության 4.3-րդ կետով սահմանված՝ Բանկի բաժնետերերի՝ Բանկի Կանոնադրական հիմնադրամում ունեցած մասնակցության հետզման դեպքերում:

9.7 Բանկի գործարքներում շահագրգիռ անձինք են համարվում խորհրդի անդամը, Բանկի կառավարման մարմիններում այլ պաշտոններ զբաղեցնող անձը կամ Բանկի բաժնետերը, որն իր հետ փոխկապակցված անձանց հետ միասին տիրապետում է Բանկի քվեարկող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսին, եթե այդ անձինք կամ նրանց հետ փոխկապակցված անձինք՝

ա) հանդիսանում են գործարքի կողմ կամ մասնակցում են գործարքին որպես միջնորդ կամ ներկայացուցիչ.

բ) տիրապետում են գործարքի կողմ, միջնորդ կամ ներկայացուցիչ հանդիսացող իրավաբանական անձի քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) 20 և ավելի տոկոսին.

գ) պաշտոններ են զբաղեցնում գործարքի կողմ, միջնորդ կամ ներկայացուցիչ հանդիսացող իրավաբանական անձի կառավարման մարմիններում:

Փոխկապակցված են համարվում «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի և բանկերի գործունեությունը կարգավորող այլ օրենքների իմաստով այդպիսիք համարված անձինք:

9.8 Շահագրգիռ անձինք պարտավոր են տեղեկություններ տրամադրել խորհրդին, ներքին ատոլիտին և արտաքին ատոլիտն իրականացնող անձին՝

ա) այն իրավաբանական անձանց մասին, որոնցում նրանք ինքնուրույն կամ նրանց հետ փոխկապակցված անձի (անձանց) հետ համատեղ տիրապետում են քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) 20 և ավելի տոկոսին.

բ) այն իրավաբանական անձանց մասին, որոնց կառավարման մարմիններում նրանք պաշտոններ են զբաղեցնում.

գ) կնքված կամ կնքման նախատեսված իրենց հայտնի գործարքների մասին, որոնցում իրենք կարող են համարվել շահագրգիռ անձ:

9.9 Բանկի գործարքներում շահագրգռվածության առկայության դեպքում գործարքները կնքվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգին, պայմաններին, կանոններին համապատասխան:

10. ԲԱՆԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍԱՐՄԻՆՆԵՐԸ

10.1 Բանկի Կառավարման մարմիններ են հանդիսանում.

- Բաժնետերերի Ընդհանուր ժողովը՝ Բանկի կառավարման բարձրագույն մարմին:
- Բանկի Խորհուրդը՝ մարմին, որն իրականացնում է Բանկի գործունեության ընդհանուր ղեկավարումը, բացառությամբ այն հարցերի, որոնք Օրենքով կամ սույն Կանոնադրությամբ վերապահված են Բանկի այլ կառավարման մարմինների իրավասությանը:
- Բանկի Վարչությունը՝ կոլեգիալ գործադիր մարմին:
- Գործադիր տնօրեն՝ Բանկի միանձնյա գործադիր մարմին:

11. ԲԱՆԿԻ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ: ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

11.1. Ընդհանուր ժողովը Բանկի կառավարման բարձրագույն մարմինն է: Ընդհանուր ժողովը կարող է լինել հերթական (տարեկան ընդհանուր ժողով) կամ արտահերթ: Ընդհանուր ժողովը գումարվում է բաժնետերերի համատեղ նիստի կամ հեռակա քվեարկության (հարցման) միջոցով: Տարեկան Ընդհանուր ժողովը գումարվում է ֆինանսական տարվա ավարտից հետո չորս ամսվա ընթացքում: Տարեկան Ընդհանուր ժողովից բացի գումարվող ժողովները համարվում են արտահերթ:

11.2 Ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանն են պատկանում՝

ա) Բանկի կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը, Բանկի նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատումը

բ) Բանկի վերակազմակերպումը.

գ) Բանկի լուծարումը.

դ) ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը, լուծարային հանձնաժողովի նշանակումը.

ե) Բանկի խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Խորհրդի քանակական կազմի հաստատման և դրա անդամների ընտրության հարցերը քննարկվում են բացառապես տարեկան ընդհանուր ժողովներում:

Խորհրդի անդամների ընտրության հարցն արտահերթ Ընդհանուր ժողովում կարող է քննարկվել, եթե վերջինս որոշում է ընդունել խորհրդի կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին.

զ) հայտարարված բաժնետոմսերի ծավալի քանակի առավելագույն չափի սահմանումը.

է) Բանկի կանոնադրական հիմնադրամի ավելացման մասին որոշում՝ բաժնետոմսերի անվանական արժեքի ավելացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով,

ը) կանոնդրական հիմնադրամի նվազեցում՝ բաժնետոմսերի անվանական արժեքի իջեցման, ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերման միջոցով՝ բաժնետոմսերի ընդհանուր քանակի կրճատման, ինչպես նաև ընկերության կողմից ձեռք բերված կամ գնված բաժնետոմսերի մարման նպատակով

թ) Խորհրդի ներկայացմամբ Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի հաստատումը.

ժ) տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների հաշիվների, ընկերության շահույթների և վնասների բաշխման հաստատում, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունում և տարեկան շահութաբաժինների չափի հաստատում:

Նշված հարցերը դիտարկվում են բացառապես տարեկան ժողովներին: Եթե տարեկան ժողովը սահմանված ժամկետում չի կայացել, արտահերթ ժողով կարող է հրավիրվել միայն ընկերության լուծարման հարցերի դիտարկման կամ սույն ենթակետում նշված հարցերի դիտարկման համար: Սույն հարցերով հրավիրված արտահերթ ժողովի ժամանակ չեն կարող դիտարկվել այլ հարցեր, բացառությամբ՝ սույն ենթակետում նշված հարցերի վերաբերյալ կայացված որոշումներով պայմանավորված կանոնադրական հիմնադրամի նվազեցման դեպքերի:

ի) Ընդհանուր ժողովի վարման կարգի հաստատումը.

լ) հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը.

խ) բաժնետերերին տեղեկատվության կամ նյութերի հայտնման ձևի որոշում, ներառյալ համապատասխան զանգվածային լրատվական միջոցների ընտրությունը Օրենքով կամ սույն Կանոնադրությամբ նախատեսված դեպքերում.

ծ) բաժնետոմսերի համախմբումն ու բաժանումը.

կ) շահագրգռվածության առկայությամբ գործարքների մասին որոշման կայացումը, եթե գործարքը և/կամ փոխկապակցված գործարքները կնքվում են Բանկի ձայնի իրավունք ունեցող բաժնետոմսերի կամ ձայնի իրավունք ունեցող բաժնետոմսերի փոխարկվող արժեթղերի տեղաբաշխման նպատակով, որոնց քանակը բանկում տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 2 տոկոսով ավել է, ինչպես նաև եթե բոլոր Խորհրդի անդամները ճանաչվում են գործարքի կնքման

հարցում հետաքրքրված անձինք: Սույն որոշումը Ընդհանուր ժողովն ընդունում է այն բաժնետերերի ձայների մեծամասնությամբ, որոնք չեն հանդիսանում գործարքի հետաքրքրված կողմ:

հ) խոշոր գործարքի կնքման մասին որոշման կայացում սույն կանոնադրության 9 կետի համաձայն:

ձ) օրենքով նախատեսված դեպքերում բանկի կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռք բերում:

դ) Խորհրդի անդամների աշխատանքի վճարման պայմանների որոշում:

ճ) Խորհրդի մասին կարգի հաստատում:

մ) դուստր և կախյալ կազմակերպությունների ստեղծում:

յ) մասնակցություն դուստր և կախյալ կազմակերպություններում:

ն) առևտրային կազմակերպությունների ասոցիացիաների հիմնադրում:

շ) մասնակցություն առևտրային կազմակերպությունների ասոցիացիաներում

ո) հաստատված օրակարգի շրջանակում օրենքով նախատեսված այլ հարցեր:

11.3 Սույն կանոնադրության 11.2-րդ կետի «ա»-«ժ», «ը»-«մ» ենթակետերում թվարկված հարցերով որոշումների ընդունումը վերապահվում է Ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը և չի կարող փոխանցվել Բանկի խորհրդին, ինչպես նաև Բանկի գործադիր տնօրենին, նրա տեղակալներին, Բանկի վարչության անդամներին, Բանկի գլխավոր հաշվապահին (այսուհետ՝ Վարչության անդամներ) կամ այլ անձի:

11.4 Ընդհանուր ժողովի որոշումները կարող են նաև ընդունվել համատեղ ներկայության կամ հեռակա քվեարկության (հարցման) միջոցով, բացառությամբ սույն կանոնադրության 11.2-րդ կետի «բ», «գ» և «ժ» կետերում նշված հարցերի: Տարեկան Ընդհանուր ժողովը չի կարող անցկացվել հեռակա կարգով քվեարկության (հարցման) միջոցով:

11.5 Ընդհանուր ժողովի՝ հեռակա կարգով քվեարկությամբ, նիստերի գումարման վերաբերյալ խորհրդի որոշմամբ սահմանվում են քվեաթերթիկների ձևը և բովանդակությունը, բանկի բաժնետերերին՝ քվեաթերթիկները և տրամադրվող տեղեկություններն ու նյութերը առաքելու տարին, ամիսը, ամսաթիվը, բաժնետերերի կողմից լրացված քվեաթերթիկները բանկի կողմից ընդունելու վերջին ժամկետի տարին, ամիս, ամսաթիվը: Ընդհանուր ժողովը հեռակա քվեարկությամբ գումարելիս ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բոլոր բաժնետերերին ուղարկվում են քվեաթերթիկները, ժողովի օրակարգը, օրակարգի հարցերի վերաբերյալ բոլոր նյութերը, օրենսդրությամբ սահմանված այլ անհրաժեշտ տեղեկություններ:

Հեռակա քվեարկության (հարցման) միջոցով ընդունված Ընդհանուր ժողովի որոշումներն օրինական ուժ ունեն, եթե քվեարկությանը մասնակցել են Բանկի քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի կեսից ավելին: Հեռակա կարգով քվեարկությունը կատարվում է «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 79-րդ հոդվածի պահանջներին համապատասխանող քվեաթերթիկների օգտագործմամբ: Հեռակա քվեարկության (հարցման) միջոցով Ընդհանուր ժողով գումարելու դեպքում քվեաթերթիկները տրամադրվում են բաժնետերերին՝ լրացրած քվեաթերթիկները Բանկի կողմից ընդունումն ավարտելու պահից առնվազն 30 օր առաջ: Հեռակա քվեարկության (հարցման) միջոցով Ընդհանուր ժողովի գումարման դեպքում տրամադրված քվեաթերթիկների ստացման վերջին օր է համարվում Ընդհանուր ժողովի գումարման ամսաթիվին նախորդող աշխատանքային օրը: Քվեաթերթիկների միջոցով քվեարկության դեպքում հաշվառվում են ձայներն այն հարցերի վերաբերյալ, որտեղ քվեարկողի կողմից թողնված է քվեարկության միայն մեկ տարբերակ: Նշված պահանջի խախտմամբ լրացված քվեաթերթիկները համարվում են անվավեր և ձայների հաշվառման ժամանակ հաշվի չեն առնվում: Քվեարկության արդյունքների վերաբերյալ կազմվում է արձանագրություն: Որը ստորագրում են բանկի հաշվիչ հանձնաժողովի անդամները կամ հանձնաժողովի գործառույթները կատարող անձը: Ժողովի ավարտից հետո բանկի բաժնետերերը տեղեկացվում են քվեարկության արդյունքներին՝ հաշվետվության հրապարկման կամ այն բաժնետերերին ուղարկելու միջոցով:

11.6 Ընդհանուր ժողովի որոշումները կարող են ընդունվել այնպիսի նիստով, որի ժամանակ Ընդհանուր ժողովի մասնակիցները կարող են հաղորդակցվել միմյանց հետ հեռախոսային, հեռուստակապի կամ այլ կապի միջոցով՝ իրական ժամանակի ռեժիմում: Նման նիստը հեռակա (հարցման) կարգով անցկացված նիստ չի համարվում:

Իրական ժամանակի ռեժիմում ընդհանուր ժողովի նիստերը անցկացվում են Ինտերնետ կապի միջոցով՝ «Սկայպ» ծրագրի (կամ այլ նամանատիպ ծրագրերի) հնարավորությունների կիրառմամբ: Ընդհանուր ժողովի յուրաքանչյուր մասնակցի համակարգչում նախօրոք տեղադրվում է «Սկայպ» ծրագիրը, կատարվում է մասնակցի գրանցում և անվան, գաղտնաբառի շնորհում: Ընդհանուր ժողովի նիստի անցկացման ժամանակ բոլոր մասնակիցների մոտ, նիստի անցակցման սահմանված ժամից 10 րոպե առաջ, միացվում է «Սկայպ» ծրագիրը, մասնակիցները մուտք են գործում «Սկայպ» համակարգ և կապ է հաստատվում ընդհանուր ժողովի քարտուղարի հետ, որն էլ ապահովում է բոլոր մասնակիցների միաժամանակյա հաղորդակցումը: Ընդհանուր ժողովի նիստի քարտուղարը նույնպես նշված ծրագրի միջոցով միանում է մասնակիցներին՝ նիստի ձայնագրումը

իրականացնելու, քննարկվող հարցերի և ընդունվող որոշումների վերաբերյալ տվյալները արձանագրելու և նիստի արձանագրությունը կազմելու համար:

Նշված կարգով, իրական ժամանակի ռեժիմում ընդհանուր ժողովի նիստի իրավիրման ժամի վերաբերյալ մասնակիցների տեղեկացումը, քննարկվող հարցերի վերաբերյալ նյութերը մասնակիցներին ուղարկելու և քննարկման արդյունքում կայացված որոշումների վերաբերյալ արձանագրությունների կազմման և մասնակիցներին ստորագրության ներկայացման գործընթացն իրականացվում է սույն գլխով սահմանված կարգով:

11.7 Բանկի Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեն`

ա) Բանկի հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը` իրենց պատկանող ձայների քանակով, ինչպես նաև անվանատերերը, եթե նրանք ներկայացնում են իրենց կողմից ներկայացվող Բանկի բաժնետերերի անվանումները և նրանց պատկանող բաժնետոմսերի քանակը հիմնավորող փաստաթղթեր:

բ) Բանկի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը` ընդհանուր ժողովի իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով, Օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում:

գ) Բանկի բաժնետեր չհանդիսացող խորհրդի և գործադիր մարմնի անդամները` խորհրդակցական ձայնի իրավունքով:

դ) Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման անդամները` որպես դիտորդ:

ե) Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձը` որպես դիտորդ (եթե նրա եզրակացությունն առկա է գումարվող Ընդհանուր ժողովի օրակարգի հարցերում):

զ) Կենտրոնական բանկի ներկայացուցիչները` որպես դիտորդ:

է) Բանկի ղեկավարները` որպես Ընդհանուր ժողովի օրակարգում ընդգրկված հարցերով զեկուցողներ:

11.8 Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Բանկի բաժնետերերի ցուցակը կազմվում է Խորհրդի կողմից սահմանված տարվա, ամսվա, ամսաթվի դրությամբ` Բանկի բաժնետերերի ռեեստրի տվյալների հիման վրա:

Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Բանկի բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը կարող է սահմանվել Ընդհանուր ժողով գումարելու մասին որոշման ընդունումից հետո, սակայն ոչ ուշ, քան Ընդհանուր ժողովի գումարումից 45 օր առաջ:

Եթե Ընդհանուր ժողովը գումարվում է հեռակա քվեարկությամբ, ապա դրան մասնակցելու իրավունք ունեցող Բանկի բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը սահմանվում են Ընդհանուր ժողովի գումարման ամսաթվից առնվազն 35 օր շուտ:

11.9 Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Բանկի բաժնետերերի ցուցակը կազմելու համար բաժնետոմսերի անվանատերը պարտավոր է ցուցակը կազմելու տարով, ամսով, ամսաթվով տվյալներ տրամադրել այն անձանց մասին, որոնց շահերը ներկայացնելու նպատակով նա տնօրինում է բաժնետոմսերը:

11.10 Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Բանկի բաժնետերերի ցուցակը պետք է տվյալներ պարունակի Բանկի յուրաքանչյուր բաժնետիրոջ անվան (անվանման), գտնվելու (բնակության) վայրի և Բանկի Կանոնադրական հիմնադրամում նրան պատկանող մասնակցության մասին, որոնք պետք է լինեն ըստ բաժնետոմսերի տեսակների և դասերի:

11.11 Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Բանկի բաժնետերերի ցուցակը տրամադրվում է ծանոթացման նպատակով Բանկի այն բաժնետերերին, որոնք գրանցված են Բանկի բաժնետերերի ռեեստրում: Սույն կետում նշված բաժնետերերին ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Բանկի բաժնետերերի ցուցակը տրամադրվում է պատվիրված նամակով կամ առձեռն` սույն գլխի 11.8 կետում սահմանված կարգով Բանկի բաժնետերերի ցուցակի կազմման տարվա, ամսվա, ամսաթվից հետո` 5 օրվա ընթացքում:

Բանկի բաժնետիրոջ պահանջով Բանկը պարտավոր է նրան տրամադրել տեղեկանք` Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակում նրա ընդգրկման մասին: Նշված տեղեկանքը բանկը պարտավոր է տրամադրել Բանկի բաժնետիրոջը պատվիրված նամակով կամ առձեռն` վերջինիս կողմից գրավոր պահանջ ներկայացնելուց հետո 5 օրվա ընթացքում:

11.12 Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Բանկի բաժնետերերի ցուցակում փոփոխություններ կարող են կատարվել միայն ցուցակը կազմելու ընթացքում թույլ տրված սխալներն ուղղելու կամ դրանում չընդգրկված Բանկի բաժնետերերի խախտված իրավունքները և օրինական շահերը վերականգնելու նպատակով:

11.13 Բանկի արտահերթ Ընդհանուր ժողովները գումարվում են անհետաձգելի հարցերի քննարկման համար: Արտահերթ Ընդհանուր ժողովները գումարվում են խորհրդի որոշմամբ` սեփական նախաձեռնությամբ կամ Բանկի գործադիր մարմնի, Բանկի աուդիտն իրականացնող անձի կամ պահանջը ներկայացնելու դրությամբ Բանկի հասարակ (սովորական) բաժնետոմսերի առնվազն 10 տոկոսի քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջ

(բաժնետերերի) պահանջով, եթե պահանջը ներկայացված է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ներկայացված օրակարգի հարցերը սույն կանոնադրությամբ վերապահված են Ընդհանուր ժողովի իրավասությանը: Բանկի առդիտն իրականացնող անձի կամ պահանջը ներկայացնելու դրությամբ Բանկի հասարակ (սովորական) բաժնետոմսերի առնվազն 10 տոկոսի քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջ (բաժնետերերի) կողմից սահմանված կարգով պահանջ ներկայացնելու դեպքում խորհուրդը պարտավոր է 10 օրվա ընթացքում որոշում ընդունել արտահերթ Ընդհանուր ժողովի գումարման կամ արտահերթ Ընդհանուր ժողովի գումարումը մերժելու մասին, ընդ որում, արտահերթ Ընդհանուր ժողովի գումարման մասին որոշում ընդունելու դեպքում խորհուրդը պետք է արտահերթ ընդհանուր ժողովը գումարի պահանջը ներկայացնելու պահից 45 օրվա ընթացքում: Արտահերթ ընդհանուր ժողովի գումարման կամ արտահերթ ընդհանուր ժողովի գումարումը մերժելու մասին խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով: Եթե սույն կետով սահմանված ժամկետում խորհուրդն արտահերթ ընդհանուր ժողովի գումարման մասին որոշում չի ընդունում կամ որոշում է ընդունում դրա գումարումը մերժելու մասին, ապա արտահերթ Ընդհանուր ժողովը կարող են գումարել ժողովի գումարման մասին պահանջը ներկայացրած անձինք՝ սույն կանոնադրությամբ Ընդհանուր ժողով գումարելու համար սահմանված կարգով:

11.14 Ընդհանուր ժողովի անցկացման տարին, ամիսը, ամսաթիվը վայրը և կարգը, ինչպես նաև բաժնետերերին Ընդհանուր ժողովի անցկացման մասին ծանուցման կարգը, բաժնետերերին տրամադրվող նյութերի ցանկը սահմանում է խորհուրդը՝ օրենքի պահանջներին համապատասխան:

11.15 Խորհուրդն Ընդհանուր ժողովի գումարման մասին Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետիրոջը, ինչպես նաև այլ անձանց ծանուցում է դրա անցկացումից ոչ ուշ, քան 15 օր առաջ:

11.16 Ընդհանուր ժողովում հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատեր բաժնետերերն ունեն Բանկի Կանոնադրական հիմնադրամում իրենց լրիվ վճարված սովորական բաժնետոմսերին համամասնական ձայնի իրավունք: Բաժնետերերի ցուցակում բաժնետիրոջ կողմից տիրապետվող ձայների կազմում չեն հաշվարկվում այն բաժնետոմսերը, որոնց արժեքը լրիվ վճարված չէ:

11.17 Ընդհանուր ժողովն իրավասու է (քվորում ունի), եթե դրան մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի գրանցման ավարտի պահին գրանցվել են Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 50-ից ավելի տոկոսին տիրապետող Բանկի բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները): Եթե Ընդհանուր ժողովը տևում է մեկ օրից ավելի, ապա յուրաքանչյուր օրվա համար իրականացվում է դրան մասնակցելու իրավունք ունեցող Բանկի բաժնետերերի գրանցում: Քվորումի բացակայության դեպքում հայտարարվում է նոր Ընդհանուր ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը: Եթե քվորումի բացակայության պատճառով չկայացած Ընդհանուր ժողովի գումարման ամսաթիվը տեղափոխվում է 20 օրից պակաս ժամկետով, ապա այդ Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի նոր ցուցակ չի կազմվում և հաստատված օրակարգի փոփոխություն չի թույլատրվում: Չկայացած Ընդհանուր ժողովի փոխարեն գումարվող նոր Ընդհանուր ժողովն իրավասու է, ե դրան մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի գրանցման ավարտի պահին գրանցվել են Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 30-ից ավելի տոկոսին տիրապետող Բանկի բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները):

11.18 Քվեարկությունը Ընդհանուր ժողովում իրականացվում է «Բանկի մեկ քվեարկող բաժնետոմս՝ մեկ ձայն» սկզբունքով, այդ թվում Խորհրդի անդամների ընտրության և օրենքով նախատեսված այլ դեպքերի, երբ կիրառվում է գումարային (կումուլյատիվ) քվեարկության սկզբունքը, բացառությամբ սույն կանոնադրության 12.5 կետում նախատեսված դեպքի: Բանկի քվեարկող բաժնետոմսն է համարվում Բանկի կողմից թողարկված և տեղաբաշխված հասարակ (սովորական) բաժնետոմսը:

11.19 Ընդհանուր ժողովի որոշումներն ընդունվում են Ընդհանուր ժողովին մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասնությամբ: Ընդ որում, 11.2-րդ կետի «ա», «բ», «դ», «զ» և «հ» ենթակետերում թվարկված հարցերով որոշումներն ընդունում է Ընդհանուր ժողովը՝ դրան մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով:

11.20 Սույն կանոնադրության 11.2-րդ կետի «բ», «թ», «խ» և «հ» ենթակետերում թվարկված հարցերով որոշումներն ընդունում է Ընդհանուր ժողովը՝ միայն խորհրդի ներկայացմամբ:

11.21 Ընդհանուր ժողովն անցկացման օրվա ընթացքում սահմանված ժամանակահատվածում տեղի է ունենում ընդհանուր ժողովի մասնակիցների գրանցում, որի արդյունքների վերաբերյալ տվյալները ամրագրվում են ընդհանուր ժողովի արձանագրության մեջ: Քվորումի առկայության դեպքում ընդհանուր ժողովն ընտրում է ժողովի նախագահ և քարտուղար: Ընդհանուր ժողովի նախագահը մասնակիցների հաստատմանն է ներկայացնում ընդհանուր ժողովի օրակարգը, որում ներառված հարցերի վերաբերյալ որոշումներն ընդունվում են սույն գլխի 11.18 կետով սահմանված կարգով:

11.22 Ընդհանուր ժողովի կողմից ընդունված որոշումների մասին տեղեկությունները, ինչպես նաև քվեարկության արդյունքները ներկայացվում են Բանկի բաժնետերերին՝ պատվիրված նամակներով կամ առձեռն հանձնելով՝ որոշման ընդունման օրվանից 45 օրվա ընթացքում:

11.23 Ընդհանուր ժողովի արձանագրությունը կազմվում է երկու օրինակից՝ ժողովի ավարտից հետո 5 օրվա ընթացքում, որոնք ստորագրում են Ընդհանուր ժողովի նախագահը և քարտուղարը: Ընդհանուր ժողովի նախագահը պատասխանատվություն է կրում արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար:

ԲԱԺԻՆ 12. ԲԱՆԿԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ: ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՉԵՎԱՎՈՐՈՒՄԸ: ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ: ԽՈՐՀՐԴԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

12.1 Բանկի խորհուրդն իրականացնում է Բանկի գործունեության ընդհանուր ղեկավարումը՝ օրենքով Խորհրդի իրավասությանը վերապահված հարցերի սահմաններում: Բանկի խորհուրդի քանակական կազմը որոշվում է բաժնետերերի Ընդհանուր ժողովի որոշմամբ, Բանկի խորհրդի կազմում պետք է ընդգրկված լինեն 5 անդամից ոչ պակաս և 15 անդամից ոչ ավելի անձիք:

12.2 Բանկի Խորհրդի անդամների լիազորությունների ընդհանուր տևողությունը անսահմանափակ է, սակայն պաշտոնավարման ժամկետը չի կարող լինել մեկ տարուց պակաս:

Խորհրդի անդամներն ընտրվում են Բանկի տարեկան Ընդհանուր ժողովում Բանկի ներկա բաժնետերերի կողմից, իսկ Բանկի խորհրդի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում՝ արտահերթ Ընդհանուր ժողովում Բանկի ներկա բաժնետերերի կողմից՝ օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով: Ընդհանուր ժողովին Բանկի խորհրդի անդամների թեկնածուների վերաբերյալ առաջարկություններ կարող են ներկայացնել Բանկի բաժնետերերը, ինչպես նաև Խորհուրդը, բացառությամբ առաջին անգամ խորհրդի ձևավորման դեպքի:

12.3 Բանկի այն բաժնետերերը, որոնք Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ տիրապետում են Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսին, իրավունք ունեն առանց ընտրության ընդգրկվելու Խորհրդի կազմում կամ դրանում նշանակելու իրենց ներկայացուցչին:

12.4 Բանկի այն բաժնետերերը, որոնք Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ տիրապետում են Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի մինչև 10 տոկոսին, կարող են միավորվել և Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսը համալրելու դեպքում՝ առանց Ընդհանուր ժողովի կողմից ընտրության ընդգրկել իրենց ներկայացուցչին խորհրդի կազմում:

Սույն կետի առաջին պարբերությամբ նշված ձևով ներկայացուցչի ընդգրկումը խորհրդում հնարավոր է միայն Բանկի բաժնետերերի խմբի ստեղծման մասին համապատասխան պայմանագրի առկայության և այդ պայմանագրի վերաբերյալ Ընդհանուր ժողովին տեղեկացնելու դեպքում:

Սույն կետի երկրորդ պարբերությամբ նշված պայմանագիրը պետք է պարունակի հետևյալ պայմաններն ու տեղեկությունները.

ա) Բանկի միավորվող բաժնետերերի վերաբերյալ տվյալներ, ներառյալ՝ նրանց պատկանող Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի քանակը.

բ) միավորվող բաժնետերերի կողմից առաջարկվող խորհրդի անդամի թեկնածուի վերաբերյալ օրենքով սահմանված տեղեկությունները.

գ) պայման այն մասին, որ պայմանագիրը կնքվում է առնվազն մեկ տարի ժամկետով և մինչև այդ ժամկետի ավարտը փոփոխման կամ լուծման ենթակա չէ.

դ) միավորվող բաժնետերերի հայեցողությամբ՝ այլ պայմաններ:

Պայմանագրի պատճենները տրամադրվում են Բանկին բոլոր բաժնետերերի ծանոթանալու հնարավորությունն ապահովելու համար, Ընդհանուր ժողովի կայացման օրվանից առնվազն 30 օր առաջ, իսկ հեռակա կարգով քվեարկության դեպքում՝ լրացրած քվեաթերթիկները Բանկի կողմից ընդունելու համար սահմանված ժամկետի վերջին օրվանից առնվազն 30 օր առաջ:

12.5 Այն բաժնետերերը, որոնք ունեն փոքր մասնակցություն կանոնադրական հիմնադրամում, իրավունք ունեն Բանկի խորհրդի կազմում ընդգրկել իրենց շահերը ներկայացնող միասնական ներկայացուցչի:

Բանկի Կանոնադրական հիմնադրամում այն բաժնետերերը, որոնք տիրապետում են Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 10 տոկոսից պակաս բաժնետոմսերին և չեն կնքել սույն կանոնադրության 12.4 կետում նշված պայմանագիրը, համարվում են փոքր մասնակցություն ունեցող բաժնետերեր:

Բանկի Կանոնադրական հիմնադրամում փոքր մասնակցություն ունեցող բաժնետերերի միասնական ներկայացուցչի պետք է առաջադրվի նրանց կողմից և ընդգրկվի Խորհրդի կազմում՝ առանց Ընդհանուր ժողովի կողմից ընտրության:

Բանկի Կանոնադրական հիմնադրամում փոքր մասնակցություն ունեցող բաժնետերերի միասնական ներկայացուցչի ընտրության ժամանակ մասնակցում են միայն Ընդհանուր ժողովի նիստին ներկա գտնվող փոքր մասնակցություն ունեցող բաժնետերերը կամ նրանց ներկայացուցիչները, նույնիսկ եթե նրանք լինեն եզակի թվով: Բանկի Կանոնադրական հիմնադրամում փոքր մասնակցություն ունեցող բաժնետերերի միասնական ներկայացուցչի ընտրության ժամանակ չեն մասնակցում Բանկի այն բաժնետերերը, որոնք կնքել են սույն կանոնադրության 12.4 կետում նշված պայմանագիրը: Բանկի Կանոնադրական հիմնադրամում փոքր մասնակցություն ունեցող յուրաքանչյուր բաժնետեր իրավունք ունի Բանկի Խորհուրդ առաջադրել միայն մեկ թեկնածուի:

Բանկի Կանոնադրական հիմնադրամում փոքր մասնակցություն ձեռք բերման պահից, Բանկը պետք է տեղեկացնի բաժնետիրոջը Բանկի Խորհուրդ փոքր մասնակցություն ունեցող բաժնետերերի իր թեկնածուի առաջադրման իրավունքի մասին:

Բանկից համապատասխան ծանուցումը ստանալու պահից 10-նօրյա ընթացքում բաժնետերը պետք է գրավոր դիմում ներկայացնի Խորհուրդ իր թեկնածուի առաջադրման վերաբերյալ: Գրավոր դիմումը պետք է ներառի.

1. թեկնածուի անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան ամսաթիվը;
2. եթե թեկնածուն հանդիսանում է Բանկի բաժնետեր՝ կանոնադրական հիմնադրամում իրեն պատկանող մասնաբաժնի չափը;
3. բաժնետիրոջ անունը, ազգանունը, հայրանունը կամ անվանումը, ինչպես նաև մասնաբաժնի չափը;
4. տեղեկություններ թեկնածուի ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխանության վերաբերյալ;
5. Խորհրդի թեկնածուին առաջադրած անձի համաձայնությունը:

Նշված ժամանակահատվածում Խորհուրդ գրավոր դիմում չներկայացնելը համարվում է բաժնետիրոջ կողմից իր թեկնածուի առաջադրումից հրաժարում:

Թեկնածուն ընտրվում է բաց քվեարկությամբ, բաժնետերերի Ընդհանուր ժողովին ներկա գտնվող Բանկի Կանոնադրական հիմնադրամում փոքր մասնակցություն ունեցող բաժնետերերի ձայների մեծամասնությամբ: Ընդ որում յուրաքանչյուր քվեարկող ունի մեկ ձայնի իրավունք, անկախ բաժնետոմսերի քանակից:

Եթե կանոնադրական հիմնադրամում փոքր մասնակցություն ունեցող բաժնետերը մեկն է, ապա տվյալ բաժնետիրոջ ներկայացուցիչը ընդգրկվում է Խորհրդի կազմում տվյալ բաժնետիրոջ գրավոր որոշման հիման վրա:

Բանկի կանոնադրական հիմնադրամում փոքր մասնակցություն ունեցող բաժնետերերի առաջադրված թեկնածուի վերաբերյալ տեղեկատվությունը Խորհրդի կողմից ներկայացվում է Ընդհանուր ժողովի բոլոր մասնակիցներին Ընդհանուր ժողովի կայացման օրվանից առնվազն 30 օր առաջ, իսկ հեռակա կարգով քվեարկության դեպքում՝ լրացրած քվեաթերթիկները Բանկի կողմից ընդունելու համար սահմանված ժամկետի վերջին օրվանից առնվազն 30 օր առաջ:

12.6 Խորհրդի անդամները չպետք է լինեն փոխկապակցված: Խորհրդի անդամները և Բանկի վարչության անդամները չեն կարող լինել միմյանց հետ փոխկապակցված անձինք: Խորհրդի անդամ կարող է լինել ՀՀ քաղաքացի կամ օտարերկրյա պետության քաղաքացի հանդիսացող այն գործունակ անձը, որը բավարարում է օրենքներով և Կենտրոնական բանկի իրավական ակտերով ներկայացվող պահանջներին:

12.7 Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ Խորհրդի անդամները ստանում են պարգևատրում: Պարգևատրման և /կամ/ փոխհատուցման չափը և վճարման կարգը սահմանվում են բաժնետերերի Ընդհանուր ժողովի որոշմամբ:

12.8 Բանկի Խորհրդի բացառիկ իրավասություններն են՝

- 1) Բանկի գործունեության հիմնական ուղղությունների որոշումը, ներառյալ՝ Բանկի հեռանկարային զարգացման ծրագրի հաստատումը.
- 2) Ընդհանուր ժողովի տարեկան և արտահերթ նիստերի գումարումը, օրակարգի հաստատումը, ինչպես նաև դրանց գումարման և անցկացման կազմակերպման հետ կապված՝ նախապատրաստական աշխատանքների իրականացման ապահովումը.
- 3) Ժողովներին մասնակցության իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակի կազմման ամսաթվի հաստատումը.

4) Սույն Կանոնադրության 11.2 կետի «բ», «թ», «խ», և «ծ» ենթակետերում նախատեսված հարցերի նախնական դիտարկում և Ընդհանուր ժողովի դիտարկմանը ներկայցում, ինչպես նաև շահութաբաժինների վճարման վերաբերյալ Ընդհանուր ժողովին առաջարկությունների ներկայացումը, այդ թվում՝ շահութաբաժինների յուրաքանչյուր վճարման համար շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող Բանկի բաժնետերերի ցուցակի կազմումը, որում պետք է ընդգրկվեն Բանկի այն բաժնետերերը, որոնք ընդգրկվել են Բանկի բաժնետերերի ռեստրում՝ Բանկի տարեկան Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա

դրությամբ, **ինչպես նաև բանկի տարեկան ֆինանսական հաշվետվության նախնական հաստատումը և Ընդհանուր ժողովին ներկայացումը.**

5) Բանկի կոլեգիալ գործադիր մարմնի /Վարչության/ ձևավորումը, Գործադիր տնօրենի, նրա տեղակալների, գլխավոր հաշվապահի նշանակումը, նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումն ու պարզևատրման չափերի հաստատումը.

6) Օրենքով սահմանված դեպքերում գույքի շուկայական արժեքի որոշումը.

7) Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի վճարման չափի սահմանումը.

8) Ժողովի համար Բանկի բաժնետոմսերով տարեկան շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ առաջարկությունների նախապատրաստումը.

9) Բանկի պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը.

10) Բանկի կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի, հաստատումը.

11) Բանկի մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների ստեղծումը.

12) գույքի օտարման կամ ձեռք բերման հետ կապված խոշոր գործարքների կնքում, որոնց առարկան հանդիսանում է գույքը, որի արժեքը գործարքի կնքման մասին որոշում կայացնելու պահին կազմում է Բանկի ակտիվների հաշվեկշռային արժեքի 25-ից 50 տոկոսը.

13) շահագրգռվածության առկայությամբ գործարքների կնքումը;

14) Բանկի վարչակազմակերպական կառուցվածքի հաստատումը.

15) Բանկի տարեկան ծախսերի նախահաշվի ու կատարողականի հաստատումը.

16) Բանկի հաստիքացուցակի հաստատումը;

17) Բանկում ներքին հսկողության ստանդարտների սահմանումը, Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման ձևավորումը (ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի և անդամների նշանակումը), նրա տարեկան աշխատանքային ծրագրի հաստատումը, ներքին աուդիտի աշխատակիցների լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների հաստատումը.

18) Բանկում իրականացված աուդիտորական կամ այլ ստուգումների արդյունքում անհրաժեշտության դեպքում բացահայտված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումների նախաձեռնումն ու դրանց իրականացման վերահսկումը.

19) Բանկի կողմից օրենքով սահմանված ֆինանսական գործառնությունների իրականացման կարգը սահմանող ներքին իրավական ակտերի հաստատումը.

20) Բանկի տարածքային (առանձնացված) ստորաբաժանումների, հիմնարկների և ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունների հաստատումը, Բանկի ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների միջև գործառնության պարտականությունների բաշխումը.

Բանկի ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանում է համարվում այն վարչությունը, ղեկարտամենտը, բաժինը կամ այլ առանձնացված ստորաբաժանումը, որը համաձայն ներքին վարչակազմակերպական կառուցվածքի ունի ինքնուրույն գործառնություններ կամ որի ղեկավարը գտնվում է Բանկի Խորհրդի կամ Գործադիր տնօրենի – Վարչության Նախագահի ուղղակի ենթակայության ներքո.

21) Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականության՝ հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու նպատակով կիրառվող սկզբունքների, հիմունքների, եղանակների, կանոնների, ձևերի և կարգերի սահմանումը.

22) խորհրդին կից հանձնաժողովների ստեղծումը, նրանց վերաբերյալ կարգերի հաստատումը.

23) Կենտրոնական բանկի հետ բանկի ֆինանսական վիճակի բարելավման և բնականոն գործունեության ապահովման նպատակով պայմանագրերի կնքումը.

24) Բանկի կապիտալի ընդհանուր արժեքի 5 և ավելի % արժեք ունեցող հիմնական միջոցների ձեռքբերման, օտարման մասին, ինչպես նաև բանկի հիմնական միջոցների գրավադրման գործարքների, իրավաբանական անձանց կանոնադրական հիմնադրամում մասնակցության և դրա հետ կապված ցանկացած այլ գործարքների վերաբերյալ որոշումների ընդունում, անկախ իրենց գնից.

25) գործող օրենսդրությամբ Բանկի խորհրդի հաստատմանը ենթակա ներքին իրավական ակտերի հաստատումը.

26) օրենքով նախատեսված դեպքերում Բանկի Գործադիր տնօրեն-Վարչության նախագահի ներկայացմամբ հաստատում է Բանկի և նրա հետ կապված անձանց միջև կնքվող գործարքները.

27) Խորհրդի քարտուղարի հաստատումը

28) Ընդհանուր ժողովի հաստատմանը Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի ներկայացումը.

29) Օրենքով, այլ իրավական ակտերով, սույն կանոնադրությամբ, խորհրդի կանոնակարգով և Բանկի ներքին իրավական ակտերով նախատեսված այլ որոշումների ընդունումը:

12.9 Սույն կանոնադրության 12.8-րդ կետում թվարկված հարցերով որոշումների ընդունումը վերապահվում է Բանկի խորհրդի բացառիկ իրավասությանը և չի կարող փոխանցվել Բանկի կառավարման այլ մարմինների կամ այլ անձանց:

12.10 Առնվազն տարին մեկ անգամ Բանկի խորհուրդն իր նիստում քննարկում է արտաքին աուդիտն իրականացնող անձի հաշվետվությունը (նամակ ղեկավարությանը), ինչպես նաև քննարկում և անհրաժեշտության դեպքում վերանայում է Բանկի գործունեության հիմնական ուղղությունները, ռազմավարությունը, կարգերն ու ներքին իրավական այլ ակտերը:

Բանկի գործունեությունը կանոնակարգող և խորհրդի կողմից (ընդունման) հաստատման ենթակա կարգերում և այլ իրավական ակտերում փոփոխությունների կատարման անհրաժեշտության դեպքում փոփոխությունները նախաձեռնող անձանց կամ ստորաբաժանումների ղեկավարների կողմից դրանց նախագծերը նախօրոք ներկայացվում են Բանկի վարչության քննարկմանը: Բանկի վարչությունը, քննարկելով կարգերում և ներքին իրավական այլ ակտերում փոփոխությունների առաջարկվող նախագիծը, այն հավանության է արժանացնում և փոփոխությունների ամբողջական փաթեթը ներկայացնում Բանկի խորհրդին: Փոփոխությունների փաթեթը պետք է ներառի առաջարկվող փոփոխությունները՝ նշելով իրավական ակտը, գործող և փոփոխվող դրույթները, հիմնավորումներ փոփոխությունների անհրաժեշտության և արդյունավետության վերաբերյալ: Եթե առաջարկվող փոփոխությունները անհրաժեշտ է կատարել շտապ, ապա Բանկի վարչությունը իրավունք ունի պահանջել անցկացնել խորհրդի արտահերթ նիստ՝ առաջարկությունները խորհրդին ներկայացնելուց հետո տաս օրվա ընթացքում: Բանկի խորհուրդը կարգերում և ներքին իրավական այլ ակտերում փոփոխություններ կատարելու հարցը քննարկում է առաջիկա նիստում և դրանց վերաբերյալ կայացնում որոշում, իսկ եթե Բանկի վարչությունը առաջարկություն է ներկայացրել փոփոխությունները շտապ կատարելու վերաբերյալ, ապա քննարկում է արտահերթ նիստում:

Բանկի խորհուրդը յուրաքանչյուր կիսամյակի (տարվա) ավարտից հետո մեկամսյա (եռամսյա) ժամկետում իր նիստում քննարկում է Բանկի գործունեության կիսամյակային (տարեկան) արդյունքները, սահմանված ուղեւիշային ցուցանիշների կատարման ընթացքը, դրանց գծով շեղումների առկայության դեպքում՝ առանձնահատուկ քննարկման առարկա դարձնելով նաև դրանց առաջացման պատճառները և կայացնում համապատասխան որոշում: Ֆինանսական տարվա ավարտից հետո Բանկի խորհուրդը իր նիստում քննարկում և տալիս է գնահատական Բանկի գործունեության սահմանված ուղղությունների ներքո գործադիր մարմնի կողմից իրականացված աշխատանքների վերաբերյալ, դիտարկում հեռանկարային զարգացման հաստատված ծրագրի կատարման հաշվետվությունը՝ անհրաժեշտության դեպքում որոշում կայացնելով ծրագրի վերանայման վերաբերյալ:

12.11 Առնվազն եռամսյակը մեկ անգամ Բանկի խորհուրդը քննարկում է Բանկի Գործադիր տնօրենի-վարչության նախագահի (վարչության), գլխավոր հաշվապահի, ներքին աուդիտի և ռիսկերի կառավարման համար պատասխանատու ստորաբաժանումների հաշվետվությունները:

Բանկի Գործադիր տնօրենի-վարչության նախագահը և գլխավոր հաշվապահը եռամսյակը մեկ անգամ Բանկի խորհրդին են ներկայացնում հաշվետվություններ Բանկի ընթացիկ ֆինանսական վիճակի և դրա գնահատման, հիմնական ցուցանիշների պլանավորված և փաստացի մեծությունների, բանկի նկատմամբ արձանագրված խախտումների և կիրառված պատժամիջոցների, եռամսյակի ընթացքում կատարված և հաջորդ եռամսյակում իրականացվելիք աշխատանքների վերաբերյալ:

12.12 Բանկի ռիսկերի կառավարման համար պատասխանատու ստորաբաժանումը եռամսյակը մեկ անգամ բանկի խորհրդին է ներկայացնում հաշվետվություններ բանկի վարկային ներդրումների, «խոշոր» վարկերի, ներգրավված և տեղաբաշխված միջոցների պայմանների վերաբերյալ, ինչպես նաև վարկային ներդրումների որակական մակարդակի վերաբերյալ իր գնահատականը: Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանումը, բացի սույն կանոնադրության 15.3 կետով սահմանված հաշվետվություններից, եռամսյակը մեկ անգամ բանկի խորհրդին է ներկայացնում եռամսյակի ընթացքում իր կողմից կատարված աշխատանքների ծավալի և ուղղությունների, եռամսյակի ընթացքում հայտնաբերված խախտումների և թերությունների բնույթի և քանակի, ինչպես նաև խորհրդի կողմից տրված հանձնարարականների կատարման վերաբերյալ տվյալներ: Բանկի խորհուրդը իր հերթական նիստում ուսումնասիրելով ներկայացված հաշվետվությունները, որոշում է կայացնում դրանք ի գիտություն ընդունելու վերաբերյալ՝ անհրաժեշտության դեպքում տալով համապատասխան հանձնարարականներ:

12.13 Բանկի խորհրդի նախագահն ընտրվում է խորհրդի կողմից խորհրդի անդամների կազմից: Խորհրդի նախագահը կարող է ունենալ տեղակալ, որն ընտրվում է խորհրդի կողմից, անդամների կազմից: Խորհրդի նախագահի տեղակալը իրականացնում է խորհրդի նախագահի պարտականությունները վերջինիս բացակայության ողջ ժամանակահատվածի ընթացքում:

Բանկի խորհրդի նախագահի և վարչության նախագահի պաշտոնները չեն կարող համատեղվել մեկ անձի կողմից: **Խորհրդի Նախագահի հետ աշխատանքային պայմանագիրը**

Բանկի կողմից կնքում է Բանկի Խորհրդի նախագահի տեղակալը կամ Խորհրդի կողմից լիազորված անձը:

Բանկի Խորհրդի նախագահը՝

ա) կազմակերպում է Խորհրդի աշխատանքները.

բ) գումարում և նախագահում է Խորհրդի նիստերը.

գ) կազմակերպում է Խորհրդի նիստերի արձանագրությունների վարումը.

դ) կազմակերպում է Խորհրդին կից հանձնաժողովների աշխատանքը.

ե) ստորագրում է Խորհրդի ընդունած որոշումները, դրանցով հաստատված փաստաթղթերը (կանոնադրություններ, կանոնակարգեր, կարգեր և այլն).

զ) նախագահում է բանկի ընդհանուր ժողովում:

12.14 Բանկի Խորհրդի նիստերը գումարվում են առնվազն երկու ամիսը մեկ: Բանկի Խորհրդի նիստերը գումարում է Բանկի Խորհրդի նախագահը՝ իր, Խորհրդի անդամի, Բանկի Գործադիր տնօրենի-վարչության նախագահի (վարչության), ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի, Բանկի արտաքին աուդիտի իրականացնող անձի, Կենտրոնական բանկի Խորհրդի, ինչպես նաև Բանկի քվեարկող բաժնետոմսերի 5 կամ ավելի տոկոս ունեցող բաժնետիրոջ (բաժնետերերի) գրավոր պահանջով:

12.15 Բանկի Խորհրդի նիստերը գումարվում և անցկացվում են հետևյալ կերպ.

- Խորհրդի նիստերի քարտուղարը Խորհրդի նիստերի գումարման մասին պատշաճ տեղեկացնում է Խորհրդի բոլոր անդամներին և Բանկի Գործադիր տնօրենին - վարչության նախագահին, ինչպես նաև Խորհրդի նիստ գումարելու պահանջ ներկայացրած անձանց՝ նշելով Խորհրդի նիստի գումարման ամսաթիվը, ամիսը, տարեթիվը, ժամը, վայրը և Խորհրդի օրակարգը.

- Խորհրդի քարտուղարը Խորհրդի նիստն սկսվելուց առնվազն 10 րոպե առաջ գրանցում է Խորհրդի նիստին ներկայացած Խորհրդի անդամներին և արդյունքների մասին հայտնում է Խորհրդի նախագահին կամ նրա տեղակալին.

- Խորհրդի նիստին քվորումն ապահովված լինելու և Բանկի Գործադիր տնօրենի - վարչության նախագահի ներկայության դեպքում սահմանված ժամին Խորհրդի նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում՝ նրա տեղակալը, հայտարարում է Խորհրդի նիստը բացված.

- Խորհրդի նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում՝ նրա տեղակալը, Խորհրդի նիստին ներկա Խորհրդի անդամներին, Բանկի Գործադիր տնօրենին - վարչության նախագահին և մասնակցող անձանց ծանոթացնում է Խորհրդի օրակարգի ու դրանում ընդգրկված հարցերի քվեարկությունների մասին.

- Խորհրդի օրակարգում ընդգրկված յուրաքանչյուր հարցի շուրջ Խորհրդի անդամները, Բանկի Գործադիր տնօրենը - վարչության նախագահն ու մասնակցող անձինք արտահայտվելու իրավունք ունեն.

- Խորհրդի օրակարգում ընդգրկված հարցերի շուրջ քննարկումներն ավարտվելուց հետո Խորհրդի նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում՝ նրա տեղակալը, հարցը դնում է քվեարկության.

- Խորհրդի քարտուղարը հաշվառում է ձայները և դրանք տրամադրում Խորհրդի նախագահին, իսկ նրա բացակայության դեպքում՝ նրա տեղակալին, որը հրապարակում է քվեարկության դրված հարցի շուրջ Խորհրդի կողմից կայացված որոշումը.

- Խորհրդի օրակարգում ընդգրկված հարցերի շուրջ որոշումներ կայացվելուց հետո Խորհրդի նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում՝ նրա տեղակալը, Խորհրդի նիստին մասնակցած Խորհրդի անդամներին տեղեկացնում է Խորհրդի նիստի արձանագրությանը ծանոթանալու և ստորագրելու կարգին, որից հետո հայտարարում է Խորհրդի նիստը փակված.

- Խորհրդի քվորումի բացակայության դեպքում Խորհրդի նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում՝ նրա տեղակալը հայտարարում է նոր Խորհրդի նիստի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը, և վայրը:

Խորհրդի նիստին Խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի ձայնի իրավունք, եթե գրանցված է Կենտրոնական Բանկում որպես Խորհրդի անդամ:

12.16 Խորհրդի նիստերը կարող են անցկացվել և դրանում ընդգրկված հարցերի շուրջ որոշումներ ընդունվել նաև այն դեպքում, երբ Խորհրդի նիստի բոլոր մասնակիցները կարող են հաղորդակցվել միմյանց հետ հեռախոսային կապի, հեռուստակապի կամ կապի այլ միջոցներով՝ իրական ժամանակի ռեժիմում: Նման նիստը հեռակա (հարցման) կարգով անցկացված նիստ չի համարվում:

Իրական ժամանակի ռեժիմում Խորհրդի նիստերը անցկացվում են սույն կանոնադրության 11.6 կետում սահմանված կարգով:

12.17 Բանկի Խորհրդի նիստերը կարող են գումարվել և անցկացվել հեռակա կարգով բացառապես անհետաձգելի հարցերի վերաբերյալ որոշումներ կայացնելու դեպքում: Խորհրդի

նիստերն հեռակա կարգով գումարումն ու անցկացումը կատարվում է քվեաթերթիկների միջոցով: Հեռակա կարգով խորհրդի նիստ գումարելու և անցկացնելու դեպքում՝

- խորհրդի նիստերի քարտուղարը խորհրդի անդամներին էլեկտրոնային կամ ֆաքսիմիլ վերարտադրության միջոցով ուղարկում է խորհրդի օրակարգը, քվեաթերթիկները՝ համապատասխան հարցով, քվեարկման տարբերակներով, տվյալ հարցի վերաբերյալ Բանկի Գործադիր տնօրեն-վարչության նախագահի գրավոր դիրքորոշումը:

- խորհրդի անդամները՝ ստանալով ուղարկված փաստաթղթերը և ծանոթանալով խորհրդի օրակարգին, 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում քվեաթերթիկների միջոցով քվեարկում են դրանում նշված հարցի շուրջ ու ֆաքսիմիլ վերարտադրության կապի միջոցով այն ուղարկում են Բանկի խորհրդի նիստի քարտուղարին:

- խորհրդի նիստի քարտուղարը ամփոփում է խորհրդի անդամների կողմից կատարված քվեարկության արդյունքները (հաշվառում է ձայները) և դրանց հիման վրա կազմում է խորհրդի նիստի հեռակա կարգով անցկացման արձանագրություն:

- հեռակա կարգով անցկացված Խորհրդի նիստի կազմված արձանագրությունը՝ քվեաթերթիկների հետ միասին ֆաքսիմիլ վերարտադրության կապի միջոցով ուղարկում է խորհրդի անդամներին՝ ստորագրության:

- հեռակա կարգով անցկացված Խորհրդի նիստի ստորագրված արձանագրության հիման վրա խորհրդի քարտուղարը կազմում է խորհրդի համապատասխան որոշման նախագիծ և այն ֆաքսիմիլ վերարտադրության կապի միջոցով ուղարկում է խորհրդի նախագահին՝ ստորագրության համար, և այն ստորագրված վիճակում ստանալով՝ տրամադրում է Բանկի Գործադիր տնօրեն-վարչության նախագահին՝ որոշման պահանջների կատարումն ապահովելու համար:

Քվեաթերթիկները համարվում են վավեր, եթե քվեաթերթիկում թողնվել է մեկ տարբերակ և ուղարկվել է քվեաթերթիկում նշված ժամկետում:

12.18 Սույն կանոնադրության 12.8 կետի «5», «17», «20» և «28» կետերում նշված, ինչպես նաև Բանկի հեռանկարային զարգացման ծրագրի հաստատումը, Բանկի խորհրդի նախագահի ընտրության հարցերը չեն կարող լուծվել Բանկի խորհրդի հեռակա նիստերի ժամանակ:

12.19 Խորհրդի նիստն իրավագոր է, եթե նիստին անձնական մասնակցության կամ հեռակա քվեարկության ձևով մասնակցում են խորհրդի անդամների կեսից ավելին: Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ, կամ սույն կանոնադրությամբ կամ ընդհանուր ժողովի հաստատած խորհրդի կարգով ձայների ավելի մեծ քանակ նախատեսված չէ: Քվեարկության ժամանակ խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի միայն մեկ ձայն: Չայնի և քվեարկության իրավունքի փոխանցումն այլ անձի (այդ թվում՝ խորհրդի այլ անդամի) չի թույլատրվում: Չայների հավասարության դեպքում խորհրդի նախագահի ձայնը որոշիչ է:

12.20 Խորհրդի նիստերի բոլոր հարցերի քննարկումը կարող է տեղի ունենալ միայն Բանկի Գործադիր տնօրենի-վարչության նախագահի պարտադիր մասնակցությամբ, բացառությամբ Բանկի Գործադիր տնօրենի-վարչության նախագահի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման, ինչպես նաև նրա վարձատրության պայմանների հաստատման հարցերի: Բանկի Գործադիր տնօրենի-վարչության նախագահը մասնակցում է խորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով:

12.21 Խորհրդի նիստերն արձանագրվում են: Նիստի արձանագրությունը կազմվում է նիստի ավարտից հետո՝ 10-օրյա ժամկետում: Արձանագրությունում նշվում են՝

ա) նիստի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը:

բ) նիստին մասնակցած անձինք:

գ) նիստի օրակարգը:

դ) քվեարկության դրված հարցերը, ինչպես նաև քվեարկության արդյունքները՝ ըստ նիստին մասնակցած յուրաքանչյուր խորհրդի անդամի:

ե) քվեարկության դրված հարցերի վերաբերյալ խորհրդի անդամների և խորհրդի նիստին մասնակցող այլ անձանց կարծիքները:

զ) նիստում ընդունված որոշումները:

Խորհրդի նիստի արձանագրությունը ստորագրում են նիստին մասնակցող բոլոր անդամները, որոնք և պատասխանատվություն են կրում արձանագրությունում առկա տեղեկությունների ճշտության և հավաստիության համար:

12.22 Խորհրդի նիստերը վարում է խորհրդի նախագահը, որը ստորագրում է նիստի որոշումները: Խորհրդի նախագահը պատասխանատվություն է կրում որոշման մեջ առկա տեղեկությունների հավաստիության համար:

12.23 Բանկի Խորհուրդը իր աշխատանքի արդյունավետ կազմակերպման նպատակով կարող է ստեղծել Բանկի Խորհրդին կից հանձնաժողովներ, կոմիտեեր և այլ աշխատանքային մարմիններ:

Բանկի խորհրդին կից կոմիտեներում կարող են ընդգրկվել Բանկի խորհրդի անդամները և Բանկի այլ աշխատակիցներ: Բանկի խորհրդին կից հանձնաժողովների որոշումներն ունեն խորհրդակցական բնույթ:

12.24. Ընդհանուր ժողովի կողմից խորհրդի անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են իր դիմումի համաձայն կամ եթե՝

ա) նա դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

բ) նրա պաշտոնավարման ընթացքում ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնց ուժով նրան արգելվում է լինել Բանկի խորհրդի անդամ (Բանկի ղեկավար).

գ) մեկ տարվա ընթացքում բացակայել է խորհրդի նիստերի առնվազն 1/4-ից անհարգելի պատճառներով կամ ընդհանուր առմամբ (ներառյալ՝ հարգելի և անհարգելի բացակայությունները) նիստերի առնվազն կեսից: Սույն կետի իմաստով իրական ժամանակի ռեժիմով հեռակա մասնակցությունը համարվում է լիարժեք մասնակցություն.

դ) օրենքով սահմանված կարգով որակագրկվել է կամ գրկվել է որոշակի պաշտոն վարելու իրավունքից.

12.25. Բանկի խորհրդի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում տվյալ խորհրդի անդամի կողմից դիմումի ներկայացման կամ սույն կանոնադրության 12.22 կետում սահմանված այլ հանգամանքների առկայության դեպքում խորհրդի նախագահը հրավիրում է խորհրդի նիստ, որի ժամանակ որոշում է կայացվում արտահերթ ընդհանուր ժողով հրավիրելու վերաբերյալ՝ խորհրդի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման և խորհրդի նոր անդամի ընտրության օրակարգով: Խորհուրդը Բանկի բաժնետերերին տեղեկացնում է արտահերթ ընդհանուր ժողովի անցկացման օրակարգի և օրվա վերաբերյալ, ինչպես նաև առաջարկում է բաժնետերերին մինչև ժողովի անցկացմանը նախորդող տասներորդ օրը ներկայացնել խորհրդի նոր անդամի թեկնածուների ամբողջական տվյալները՝ բաժնետերերին ներկայացնելով նաև խորհրդի կողմից առաջադրվող խորհրդի նոր անդամի թեկնածուների մասին տվյալներ: Բանկի խորհրդի նոր անդամը ընտրվում է արտահերթ ընդհանուր ժողովում բանկի ներկա մասնակիցների կողմից հետևյալ կարգով. բոլոր թեկնածուների վերաբերյալ տվյալները ներկայացվում են Բանկի ընդհանուր ժողովի քննարկմանը, այնուհետև յուրաքանչյուրի վերաբերյալ անցկացվում է քվեարկություն և ընտրված է համարվում առավել ձայներ ստացած թեկնածուն:

12.26. Բանկը ՀՀ գործող օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված կարգով վարում է խորհրդի անդամների ռեեստր, որը բաց է Բանկի բաժնետերերի ծանոթացման համար:

Խորհրդի անդամների ռեեստրը պետք է պարունակի խորհրդի անդամների վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված տեղեկությունները:

12.27 Բանկի խորհրդի նախագահը կամ խորհրդի անդամը չի կարող միաժամանակ լինել Բանկի Գործադիր տնօրեն - վարչության նախագահ կամ վարչության անդամ կամ այլ աշխատակից, ինչպես նաև այլ բանկի կամ վարկային կազմակերպության խորհրդի անդամ, գործադիր մարմնի անդամ կամ այլ աշխատակից, բացառությամբ եթե Բանկը և այլ բանկը կամ վարկային կազմակերպությունը հանդիսանում են միմյանց հետ փոխկապակցված անձինք:

ԲԱՃԻՆ 13. ԳՈՐԾԱՂԻՐ ՏՆՕՐԵՆ ԵՎ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

13.1 Բանկի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում են Բանկի Գործադիր տնօրենը: Գործադիր տնօրենը կարող է ունենալ տեղակալներ: Բանկի Գործադիր տնօրենը, Գործադիր տնօրենի տեղակալները, վարչության անդամները, Բանկի Գլխավոր հաշվապահը նշանակվում են Բանկի Խորհրդի կողմից:

13.2 Բանկի վարչության կազմը հաստատում է Բանկի Խորհուրդը: Վարչության կազմում պետք է ընդգրկվեն առնվազն 3 անդամ: Վարչության լիազորությունների ժամկետը՝ 2 տարի: Գործադիր տնօրենի, նրա տեղակալների, Գլխավոր հաշվապահի՝ 2 տարի:

13.3 Բանկի վարչության կազմում, ի պաշտոնե, ընդգրկվում են Գործադիր տնօրենը, նրա տեղակալները և գլխավոր հաշվապահը: Բանկի վարչության կազմում կարող են ընդգրկվել նաև այլ անձինք: Գործադիր տնօրենը հանդիսանում է Վարչության նախագահ:

13.4 Բանկի Վարչությունը գործում է սույն կանոնադրության և Բանկի Խորհրդի կողմից հաստատված Բանկի վարչության կանոնակարգի հիման վրա: Բանկի վարչության կանոնակարգը սահմանում է նաև Բանկի վարչության նիստերի հրավիրման ու անցկացման ժամկետներն ու կարգը, ինչպես նաև նրա կողմից որոշումների ընդունման կարգը:

13.5 Բանկի Վարչությունը՝

ա) խորհրդի հաստատմանն է ներկայացնում Բանկի խորհրդի կողմից հաստատվող ներքին իրավական ակտերը, տարածքային (առանձնացված) ստորաբաժանումների, հիմնարկների և

ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունները, Բանկի վարչակազմակերպական կառուցվածքը.

բ) լուծում Բանկի աշխատանքային ներքին կանոնակարգերով իրեն վերապահված հարցերը.

գ) սահմանում է Բանկի կողմից մատուցվող ծառայությունների սակագները, Բանկի կողմից իրականացվող ֆինանսական գործառնությունների տոկոսադրույքները, մասնավորապես՝ սահմանում է բոլոր ավանդատեսակների, վարկերի, երաշխավորությունների, ակրեդիտիվների, լիզինգային և այլ գործառնությունների տոկոսադրույքները, ինչպես նաև այն տոկոսադրույքները, որոնց վերաբերյալ որոշումների կայացումը վերապահված չէ կառավարման բարձրագույն մարմինների իրավասությանը: Վարչությունը սահմանում է նաև Բանկի կոցմից հաճախորդներին տրամադրվող արտոնություններ: Սույն գործառնությամբ Վարչության կողմից կարող է վերապահվել Վարչությանը կից ստեղծված և գործող կոմիտեներին:

դ) նախապես քննարկում է Ընդհանուր ժողովի կամ խորհրդի իրավասությանը վերապահված հարցերը.

ե) իր իրավասության սահմաններում կազմավորում է մշտապես կամ ժամանակավոր գործող կոմիտեներ, աշխատանքային, խորհրդակցական և այլ տիպի մարմիններ.

զ) քննարկում է տարածքային (առանձնացված) ստորաբաժանումներ և հիմնարկներ ստեղծելու, դրանց գործունեությունը դադարեցնելու նպատակահարմարության հարցերը.

է) Բանկի խորհրդի կողմից հաստատված տարեկան ծախսերի նախահաշվի շրջանակներում հաստատում է Բանկի աշխատատեղերը.

ը) հաստատում է Բանկի ընթացիկ գործունեությունը կանոնակարգող աշխատանքային փաստաթղթերը, կարգերը, դրույթները, կանոնակարգերը, ինչպես նաև Բանկի կողմից իրականացվող ֆինանսական գործառնությունների վերաբերյալ ընթացակարգերը, կանոնները և կարգերը, որոնք ընդունվում են Խորհրդի կողմից հաստատված ներքին իրավական ակտերի հիման վրա և ի կատարման, բացառությամբ այն փաստաթղթերի, որոնք, համաձայն գործող օրենսդրության և սույն կանոնադրության, ենթակա են հաստատման Բանկի խորհրդի կողմից.

թ) ապահովում է Ընդհանուր ժողովի և խորհրդի որոշումների կատարումը.

ժ) կայացնում է որոշումներ Բանկի նկատմամբ առկա պայմանագրային պարտավորությունների խախտման համար նախատեսված տույժերի /տուգանքների/ **և տոկոսների** դադարեցման վերաբերյալ, ինչպես նաև բանկի հանդեպ առկա դրամական պարտավորությունները ներելու վերաբերյալ Խորհրդի կողմից հաստատված սահմանաչափի շրջանակներում.

ի) լուծում է օրենքով, այլ իրավական ակտերով, սույն կանոնադրությամբ, վարչության կանոնակարգով և ներքին իրավական ակտերով նախատեսված այլ հարցեր:

13.6 Բանկի վարչության նիստերը անցկացվում են, եթե նիստին ներկա է վարչության անդամների կեսից ավելին: Վարչության որոշումներն ընդունվում են ընդհանուր անդամների թվի ձայների մեծամասնությամբ, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ, կամ սույն կանոնադրությամբ կամ խորհրդի հաստատած վարչության կանոնակարգով (դրույթներով) ձայների ավելի մեծ քանակ նախատեսված չէ: Քվեարկության ժամանակ վարչության յուրաքանչյուր անդամ ունի միայն մեկ ձայն: Չայնի և քվեարկության իրավունքի փոխանցումն այլ անձի (այդ թվում՝ վարչության այլ անդամի) չի թույլատրվում: Չայների հավասարության դեպքում վարչության նախագահի ձայնը որոշիչ է:

13.7 Բանկի վարչության յուրաքանչյուր անդամն օգտվում է վարչության նիստում ձայնի իրավունքից, եթե նա Կենտրոնական բանկում գրանցվել է որպես վարչության անդամ: Մինչև վարչության անդամի Կենտրոնական բանկում գրանցվելը վարչության անդամի թեկնածուն կարող է մասնակցել վարչության նիստերին միայն խորհրդակցական ձայնի իրավունքով:

13.8 Բանկի վարչության նիստերն արձանագրվում են: Բանկի վարչության նիստերի արձանագրությունները ներկայացվում են Խորհրդին, ներքին աուդիտի ստորաբաժանմանը, Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձին: Նիստի արձանագրությունը կազմվում է նիստի ավարտից հետո՝ 10-օրյա ժամկետում: Արձանագրությունում նշվում են՝

ա) նիստի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը.

բ) նիստին մասնակցած անձինք.

գ) նիստի օրակարգը.

դ) քվեարկության դրված հարցերը, ինչպես նաև քվեարկության արդյունքները՝ ըստ նիստին մասնակցած վարչության յուրաքանչյուր անդամի.

ե) քվեարկության դրված հարցերի վերաբերյալ վարչության անդամների և վարչության նիստին մասնակցող այլ անձանց կարծիքները.

զ) նիստում ընդունված որոշումները:

Բանկի վարչության նիստի արձանագրությունը ստորագրում են նիստին մասնակցող բոլոր անդամները, որոնք և պատասխանատվություն են կրում արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար:

13.9 Բանկի վարչության նիստերը կազմակերպում և վարում է Վարչության նախագահը, որը ստորագրում է նիստի որոշումները: Վարչության նախագահը պատասխանատվություն է կրում որոշման մեջ առկա տեղեկությունների հավաստիության համար:

13.10 Բանկի Վարչության նիստերը հրավիրվում են ըստ անհրաժեշտության՝ Վարչության նախագահի կամ Վարչության ցանկացած անդամի նախաձեռնությամբ: Վարչության նիստերի հրավիրման և անցկացման կարգը սահմանվում է Բանկի վարչության մասին Կարգով:

Բանկի վարչությունը խորհրդին պարբերաբար, բայց ոչ պակաս, քան եռամսյակը մեկ անգամ, ներկայացնում է իր գործունեության վերաբերյալ հաշվետվություններ:

13.11 Բանկի վարչության որոշմամբ սահմանվում են բանկի գործունեության այն ոլորտները, որոնց կորոշինացման պարտականությունը դրվում է վարչության առանձին անդամների վրա: Վարչության անդամը իրավունք ունի ներկայացնելու առաջարկներ իր կորոշինացման ներքո գտնվող ստորաբաժանումների աշխատանքների կատարելագործման, վերջիններիս աշխատանքների կատարողականի գնահատման, աշխատակիցների խրախուսման կամ կարգապահական պատասխանատվության ենթարկելու և այլ հարցերի վերաբերյալ: Վարչության անդամը իրավասու է հանդես գալ բանկի գործունեությունը կանոնակարգող ներքին իրավական ակտերի ընդունման, դրանցում փոփոխություններ կատարելու նախաձեռնությամբ և սույն կանոնադրության 13.10 կետով սահմանված կարգով վարչության նիստ հրավիրելու միջնորդությամբ: Վարչության անդամը պատասխանատվություն է կրում իր կորոշինացման ներքո գտնվող ստորաբաժանումների ֆունկցիոնալ պարտականությունների, վերջիններիս կողմից օրենքների և բանկի ներքին իրավական ակտերի պահանջների կատարման, ինչպես նաև վերջիններիս կողմից կատարվող աշխատանքների նկատմամբ պատշաճ հսկողության իրականացման համար: Վարչության անդամը պարտավոր է մասնակցել վարչության նիստերին և ապահովել վերջինիս կողմից ընդունված որոշումների կատարումը՝ իր լիազորությունների շրջանակներում:

13.12 Բանկի Գործադիր տնօրենը, որպես իր բացառիկ իրավասություն, ներկայացնում է Բանկը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում, Բանկի անունից կնքում է գործարքներ (բացառությամբ այն դեպքերի, երբ գործարք կնքելու վերաբերյալ որոշման կայացումը համաձայն Օրենքի կամ սույն կանոնադրության վերաբերվում է բաժնետերերի Ընդհանուր ժողովի կամ Բանկի Խորհրդի իրավասություններին):

13.13 Գործադիր տնօրենը՝

ա) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, կարգադրություններ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

բ) տնօրինում է Բանկի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

գ) Բանկի աշխատակիցների հետ կնքում է աշխատանքային պայմանագրեր, ու ՀՀ աշխատանքային օրենսգրքի իմաստով հանդես է գալիս որպես գործատուի ներկայացուցիչ.

դ) լուծում է Բանկի աշխատակիցների հետ կնքված աշխատանքային պայմանագրերը:

ե) ստորագրում և իրավասու մարմիններին է ներկայացնում Բանկի ֆինանսական, վիճակագրական, հարկային և այլ բնույթի հաշվետվություններ, իրավաբանական նշանակություն ունեցող փաստաթղթեր.

զ) ստորագրում է վարչության նիստերի արձանագրություններն ու որոշումները.

է) կազմակերպում է Բանկի վարչության կողմից ընդունված որոշումների կատարումը.

ը) խորհրդի հաստատմանն է ներկայացնում Բանկի և նրա հետ կապված անձանց միջև օրենքով սահմանված գործարքների կնքումը.

թ) Բանկի աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ.

ժ) նշանակում է Բանկի գլխավոր հաշվապահի տեղակալին, Բանկի մասնաճյուղերի կառավարիչներին և գլխավոր հաշվապահներին, ներկայացուցչությունների, հիմնարկների, Բանկի ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին, նրանց տեղակալներին, վաղաժամկետ դադարեցնում է նրանց լիազորությունները և որոշում է նրանց վարձատրության պայմանները.

ի) իր իրավասության սահմաններում կազմավորում է հանձնաժողովներ, աշխատանքային խմբեր, խորհրդակցական մարմիններ.

յ) իրականացնում է Բանկի կանոնադրությամբ, ինչպես նաև խորհրդի կողմից սահմանված իրավական ակտերի շրջանակներում նախատեսված՝ Բանկի ընթացիկ գործունեության ղեկավարման հետ կապված այլ իրավասություններ:

Բանկի Գործադիր տնօրենը հաշվետու է Ընդհանուր ժողովին, Խորհրդին և Վարչությանը:

13.14 Բանկի խորհրդի կողմից **Գործադիր տնօրենի և իր տեղակալների** լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են իր դիմումի համաձայն, կամ եթե՝

ա) նա դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

բ) նրա պաշտոնավարման ընթացքում ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնց ուժով նրան արգելվում է լինել Բանկի գործադիր տնօրեն /Բանկի ղեկավար/.

գ) օրենքով սահմանված կարգով որակագրկվել է կամ գրկվել է որոշակի պաշտոն վարելու իրավունքից.

13.15 Բանկի Գործադիր տնօրեն-վարչության նախագահը, վարչության նախագահի տեղակալները, վարչության անդամները չեն կարող միաժամանակ լինել այլ բանկի գործադիր տնօրեն, գործադիր տնօրենի տեղակալ, գլխավոր հաշվապահ, տնօրինության անդամ, ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավար կամ անդամներ:

13.16. Գործադիր տնօրենը, նրա տեղակալները, Վարչության անդամները բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքներից կարող են կատարել վճարովի այլ աշխատանք միայն Բանկի Խորհրդի համաձայնությամբ:

ԲԱԺԻՆ 14. ԲԱՆԿԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀԸ

14.1 Բանկի գլխավոր հաշվապահն իրականացնում է «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով գլխավոր հաշվապահի համար սահմանված իրավունքները և պարտականությունները:

Բանկի գլխավոր հաշվապահը նշանակվում է Բանկի խորհրդի կողմից՝ Բանկի Գործադիր տնօրենի ներկայացմամբ:

Բանկի գլխավոր հաշվապահի իրավունքները և պարտականությունները չեն կարող փոխանցվել Ընդհանուր ժողովին, խորհրդին, Բանկի Գործադիր տնօրենին-վարչության նախագահին և վարչության անդամներին, ներքին աուդիտի ստորաբաժանմանը կամ այլ անձի: Գլխավոր հաշվապահը պետք է համապատասխանի Կենտրոնական բանկի սահմանած որակավորման և մասնագիտական համապատասխանության չափանիշներին:

Բանկի գլխավոր հաշվապահը Բանկի կառավարման համապատասխան մարմնին ներկայացնում է իր տեղակալի և Բանկի տարածքային (առանձնացված) ստորաբաժանումների գլխավոր հաշվապահների, նրանց տեղակալների թեկնածուներին:

14.2 Բանկի գլխավոր հաշվապահն առնվազն եռամսյակը մեկ անգամ Բանկի խորհրդին, Գործադիր տնօրեն-վարչության նախագահին և վարչությանն է ներկայացնում ֆինանսական հաշվետվություններ:

Բանկի գլխավոր հաշվապահը պատասխանատվություն է կրում Բանկի հաշվապահական հաշվառման վարման, դրա վիճակի և հավաստիության, տարեկան հաշվետվության, ֆինանսական և վիճակագրական հաշվետվություններն օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված պետական մարմիններին ժամանակին ներկայացնելու, ինչպես նաև Բանկի բաժնետերերին, պարտատերերին և մամուլի ու զանգվածային լրատվության մյուս միջոցներին Բանկի մասին տրամադրվող ֆինանսական տեղեկությունների հավաստիության համար՝ օրենքներին, այլ իրավական ակտերին և սույն կանոնադրությանը համապատասխան:

Բանկի Գլխավոր հաշվապահը իր պարտականությունների պատշաճ կատարման համար կրում է պատասխանատվություն ՀՀ իրավական ակտերի համապատասխան:

14.3 Գլխավոր հաշվապահի և Բանկի տարածքային (առանձնացված) ստորաբաժանումների գլխավոր հաշվապահների տեղակալները պետք է համապատասխանեն Կենտրոնական բանկի սահմանած որակավորման և մասնագիտական համապատասխանության չափանիշներին: Գլխավոր հաշվապահի և Բանկի տարածքային (առանձնացված) ստորաբաժանումների գլխավոր հաշվապահների բացակայության դեպքում նրանց պարտականությունները կատարում է համապատասխանաբար նրանց տեղակալները:

14.4 Բանկի գլխավոր հաշվապահը միաժամանակ չի կարող լինել այլ բանկի գործադիր տնօրեն, գործադիր տնօրենի տեղակալ, գլխավոր հաշվապահ, տնօրինության անդամ, ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավար կամ անդամ:

14.5 Բանկի գլխավոր հաշվապահը բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքներից, կարող է կատարել վճարովի այլ աշխատանք միայն Բանկի խորհրդի համաձայնությամբ:

15. ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄԸ

15.1 Ներքին աուդիտի ստորաբաժանման (այսուհետ՝ ներքին աուդիտ) ղեկավարը և անդամները նշանակվում են Բանկի խորհրդի կողմից և հաշվետու են Բանկի խորհրդին: Ներքին աուդիտի անդամ չեն կարող լինել Բանկի կառավարման մարմինների անդամները, այլ ղեկավարներ ու աշխատակիցներ, ինչպես նաև Բանկի գործադիր տնօրեն-վարչության նախագահի և վարչության

անդամների հետ փոխկապակցված անձինք: Ներքին աուդիտի ղեկավարը պետք է համապատասխանի Կենտրոնական բանկի սահմանած որակավորման և մասնագիտական համապատասխանության չափանիշներին:

Ներքին աուդիտի ղեկավարը և անդամները պարտավոր են պահպանել Բանկի աշխատակիցների համար սահմանված աշխատանքային կարգապահությունը:

15.2 Բանկի ներքին աուդիտը Բանկի խորհրդի հաստատած կանոնակարգի համաձայն՝

ա) հսկողություն է իրականացնում Բանկի ընթացիկ գործունեության և գործառնական ռիսկերի նկատմամբ:

բ) հսկողություն է իրականացնում Բանկի Գործադիր տնօրենի-վարչության նախագահի (վարչության), տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումների կողմից օրենքների, այլ իրավական ակտերի և Բանկի ներքին ակտերի, Բանկի Գործադիր տնօրենի-վարչության նախագահին (վարչությանը) տրված հանձնարարականների կատարման նկատմամբ:

գ) եզրակացություններ և առաջարկություններ է տալիս Բանկի խորհրդի ներկայացրած, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ առաջադրված հարցերի վերաբերյալ:

դ) իրականացնում է Ներքին աուդիտի ծառայության վերաբերյալ Կարգով նախատեսված այլ գործառնություններ և խնդիրներ:

Ներքին աուդիտի իրավասություններին վերաբերող հարցերը չեն կարող փոխանցվել Բանկի կառավարման մարմինների կամ այլ անձանց լուծմանը:

15.3 Ներքին աուդիտի ղեկավարը Խորհրդին և Վարչությանն է ներկայացնում հետևյալ հաշվետվությունները՝

ա) հերթական՝ տարեկան ծրագրով սահմանված ստուգումների արդյունքների մասին:

բ) արտահերթ, եթե բացահայտվել են ներքին աուդիտի հիմնավորված կարծիքով էական խախտումներ, ընդ որում, եթե խախտումները հետևանք են Բանկի Գործադիր տնօրենի-վարչության նախագահի (վարչության) կամ Խորհրդի գործողությունների կամ անգործության, ապա հաշվետվությունը ներկայացվում է անմիջապես Խորհրդի նախագահին:

Սույն մասով նախատեսված ղեպքերում հաշվետվությունները ներկայացվում են խախտումը հայտնաբերելուց երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Ներքին աուդիտն օրենքների, այլ իրավական ակտերի խախտումներ բացահայտելու դեպքում պարտավոր է դրանք ներկայացնել Բանկի խորհրդին՝ միաժամանակ առաջարկելով այդ խախտումների վերացման և ապագայում չկրկնման ուղղությամբ ձեռնարկվելիք միջոցառումներ: Ներքին աուդիտի հաշվետվությունները, նախքան Բանկի խորհրդին ներկայացնելը, քննարկվում է Բանկի խորհրդին կից գործող Աուդիտի կոմիտեի նիստում, որի առաջարկները ներքին աուդիտի ծառայության հաշվետվությունների հետ միասին ներկայացվում է Բանկի խորհրդի քննարկմանը:

15.4 Բանկի ներքին աուդիտի ղեկավարը և անդամները միաժամանակ չեն կարող լինել այլ բանկի գործադիր տնօրեն, գործադիր տնօրենի տեղակալ, գլխավոր հաշվապահ, տնօրինության անդամ, ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավար կամ անդամներ:

15.5 Բանկի ներքին հսկողության իրականացման նվազագույն պահանջները սահմանվում են Կենտրոնական բանկի կողմից, որի դրույթները պարտադիր են ներքին աուդիտի համար:

15.6 Ներքին աուդիտն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ իրավական ակտերով, սույն կանոնադրությամբ, իր կանոնակարգով, Բանկի ներքին ակտերով, Կենտրոնական բանկի կողմից սահմանված նորմատիվային ակտերով, որոնք կվերաբերեն ներքին աուդիտին:

ԲԱԺԻՆ 16. ԲԱՆԿԻ ԱՐՏԱՔԻՆ ԱՈՒԴԻՏԸ

16.1 Յուրաքանչյուր տարի Բանկի ֆինանսատնտեսական գործունեության ստուգման նպատակով Բանկը ներգրավում է օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով աուդիտորական ծառայությունների իրականացման իրավունք ունեցող անկախ աուդիտ իրականացնող անձի (այսուհետ՝ նաև արտաքին աուդիտ)՝ կնքելով նրա հետ համապատասխան պայմանագիր: Բանկի արտաքին աուդիտին ընտրում է ընդհանուր ժողովը՝ Կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով: Արտաքին աուդիտի ծառայությունների համար վճարվող գումարի չափը որոշում է Բանկի խորհուրդը:

Բանկի ֆինանսատնտեսական գործունեության ստուգումն արտաքին աուդիտի կողմից կարող է իրականացվել նաև Բանկի՝ քվեարկող բաժնետոմսերի առնվազն 5 տոկոսի սեփականատեր բաժնետերերի պահանջով: Այդ դեպքում Բանկի արտաքին աուդիտ իրականացնող անձին ընտրում, նրա հետ պայմանագիր են կնքում, նրա ծառայությունների դիմաց վճարում են ստուգում պահանջող բաժնետերերը, ընդ որում, նրանք կարող են Բանկից պահանջել իրենց կատարած ծախսերի հատուցում, եթե այդ ստուգումն Ընդհանուր ժողովի որոշմամբ արդարացված է եղել Բանկի համար:

Բանկի արտաքին աուդիտ ցանկացած ժամանակ կարող է հրավիրվել նաև Բանկի խորհրդի կողմից՝ Բանկի միջոցների հաշվին:

16.2 Բանկն արտաքին աուդիտ իրականացնող անձի հետ կնքվող պայմանագրում, բացի աուդիտորական եզրակացության կազմումից, պետք է նախատեսի նաև աուդիտորական հաշվետվության (նամակ Բանկի ղեկավարությանը) կազմում: Բանկն արտաքին աուդիտ իրականացնող անձի հետ կնքվող պայմանագրում պետք է նախատեսի նաև իր կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունների արժանահավատության ստուգում:

16.3 Կենտրոնական բանկը կարող է պարտադրել Բանկին չորս ամսվա ընթացքում հրավիրել արտաքին աուդիտ և հրապարակել նրա եզրակացությունը: Կենտրոնական բանկն իրավունք ունի պահանջելու Բանկից, որպեսզի նա փոխի արտաքին աուդիտն իրականացնող անձին և նշանակի այլ արտաքին աուդիտ իրականացնող անձ:

16.4 Արտաքին աուդիտի եզրակացությունը Կենտրոնական բանկին է ներկայացվում մինչև ֆինանսական տարվան հաջորդող տարվա մայիսի 1-ը:

16.5 Բանկը պարտավոր է օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված ժամկետներում մամուլում հրապարակել աուդիտային եզրակացությունը, տարեկան ֆինանսական հաշվետվությունը:

16.6 Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձը կամ նրա կազմում ընդգրկված աուդիտորը չի կարող՝

ա) լինել Բանկի կամ դրա ստորաբաժանումների աշխատակից կամ զբաղեցնել այդտեղ որևէ պաշտոն, լինել Բանկի աշխատակիցների հայրը, մայրը, ամուսինը, ամուսնու ծնողները, տատը, պապը, քույրը, եղբայրը, երեխաները, քրոջ, եղբոր ամուսինը և երեխաները.

բ) հանդիսանալ Բանկի բաժնետոմսերի, արժեթղթերի կամ այլ գույքի կամ գույքային իրավունքների սեփականատեր.

գ) կնքել այնպիսի գործարքներ Բանկի հետ, որոնք կապված չեն իր՝ որպես Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի գործունեության հետ.

դ) կնքել այնպիսի գործարքներ Բանկի հետ, որոնք կապված չեն իր՝ որպես Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի գործունեության հետ և որոնց համաձայն իրեն վճարվող գումարի չափը կախված է աուդիտի արդյունքներից:

ԲԱԺԻՆ 17. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

17.1 Բանկը կազմում, հրապարակում և Կենտրոնական բանկ է ներկայացնում տարեկան, եռամսյակային ֆինանսական և այլ հաշվետվություններ:

17.2 Բանկի կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները և այլ տեղեկությունները պետք է լինեն ամբողջական և արժանահավատ:

17.3 Բանկը պարտավոր է օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված ժամկետներում հրապարակել իր եռամսյակային ֆինանսական հաշվետվությունները:

17.4 Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով Բանկը վարում է հաշվապահական հաշվառում և ներկայացնում է ֆինանսական, հարկային ու վիճակագրական հաշվետվություն:

17.5 Հաշվառումը Բանկում իրականացվում է Կենտրոնական բանկի և կառավարության լիազորած մարմնի հետ համաձայնեցված կարգով՝ միջազգային ստանդարտներին համապատասխան:

17.6 Բանկի ֆինանսական (գործառնական) տարին սկսվում է հունվարի 1-ին և ավարտվում նույն տարվա դեկտեմբերի 31-ին:

17.7 Բանկի գործունեության նկատմամբ վերահսկողության բացառիկ իրավունքը պատկանում է Կենտրոնական բանկին, որն այդ վերահսկողությունն իրականացնում է ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

17.8 Բանկը պարտավոր են ընդունել և աջակցել Կենտրոնական բանկի աշխատակիցներին: Վերահսկողություն և վերստուգումներ իրականացնելիս արգելվում է ծառայողների օրինական գործողություններին խոչընդոտելը կամ միջամտելը:

ԲԱԺԻՆ 18. ՏԵՐԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ

18.1 Բանկը պարտավոր է մշտապես հրապարակել «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով տեղեկությունները:

18.2 Բանկը Կենտրոնական բանկի պահանջով, բացի սույն կանոնադրության 18.5-րդ կետում նշված տեղեկություններից, ինտերնետում՝ իր տնային էջում, մամուլում կամ զանգվածային լրատվության այլ միջոցներով Կենտրոնական բանկի խորհրդի սահմանած հաճախականությամբ և կարգով հրապարակում է նաև այլ տեղեկություններ, բացառությամբ առևտրային, բանկային կամ այլ զաղտմիք կազմող տեղեկությունների:

18.3 Բանկը պարտավոր է նաև ցանկացած անձի պահանջով նրան տրամադրել՝

ա) Բանկի պետական գրանցման վկայականի և Բանկի կանոնադրության պատճենները.

բ) Բանկի թողարկած պարտատոմսերի և այլ արժեթղթերի հրապարակային տեղաբաշխման դեպքում՝ տեղեկություններ՝ «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով սահմանված ծավալով և կարգով.

գ) Օրենքով նախատեսված այլ տեղեկություններ կամ փաստաթղթերի պատճեններ:

Սույն կետում նշված տեղեկությունների տրամադրման համար գանձվող վճարը չի կարող ավելի լինել դրանց պատրաստման և (կամ) փոստային առաքման համար արված փաստացի ծախսերից:

Բանկը պարտավոր է իր գլխավոր գրասենյակում, Բանկի մասնաճյուղերում և ներկայացուցչություններում՝ տեսանելի վայրում, փակցնել հայտարարություն՝ սույն կետում նշված տեղեկությունների ստացման հնարավորության և այդ տեղեկությունների ստացման կարգի, վայրի և ժամանակի մասին:

18.4 Բանկի յուրաքանչյուր բաժնետեր իրավունք ունի անվճար ստանալու Բանկի վերջին տարեկան հաշվետվության և արտաքին աուդիտի եզրակացության պատճենները:

Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 2%-ին և ավելիին տիրապետող յուրաքանչյուր բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով Բանկը նրան պետք է անվճար տրամադրի հետևյալ տեղեկությունները (թեկուզև դրանք կազմեն Բանկային, առևտրային կամ այլ գաղտնիք՝)

ա) Բանկի խորհրդի, Գործադիր տնօրենի- վարչության նախագահի և գլխավոր հաշվապահի վերաբերյալ սույն կանոնադրության 18.5 կետում նշված տեղեկությունները.

բ) Բանկի խորհրդի անդամների, գործադիր տնօրենի և գլխավոր հաշվապահի՝ նախորդ տարվա ընթացքում բանկից ստացված ամբողջ վարձատրության (ներառյալ՝ պարգևատրումների, բանկի համար որոշակի աշխատանք կատարելու դիմաց վճարների, աշխատավարձին հավասարեցված այլ եկամուտների) չափը, նրանց և նրանց հետ փոխկապակցված անձանց կողմից բանկից ստացված վարկերի և այլ փոխառությունների (այդ թվում՝ նաև մարված) վերաբերյալ տվյալներ, այդ թվում՝ չափը, տոկոսադրույքը և ժամկետը, բանկում նշանակալից մասնակցություն ունեցող մասնակիցների մասին տեղեկատվություն՝ նրանց անունը (անվանումը), բանկում նրանց ունեցած մասնակցության չափը (բացառությամբ այն անուղղակի նշանակալից մասնակցություն ունեցող անձանց, որոնք չունեն բանկի կանոնադրական հիմնադրամում մասնակցություն՝ բաժնետոմս, բաժնեմաս կամ փայ), նախորդ տարվա ընթացքում նրանց և նրանց հետ փոխկապակցված անձանց կողմից բանկից ստացված վարկերի և այլ փոխառությունների (այդ թվում՝ նաև մարված) վերաբերյալ տվյալներ, այդ թվում՝ չափը, տոկոսադրույքը և նախորդ տարվա ժամկետը:

գ) Բանկի և նրա հետ կապված անձանց միջև կնքված խոշոր գործարքների, ինչպես նաև այն գործարքների մասին, որոնք կնքվել են այդ տեղեկությունները ստանալու վերաբերյալ պահանջը ներկայացնելուն նախորդող երկու տարվա ընթացքում և կապված են Բանկի կողմից «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 34 հոդվածի առաջին մասի «ա-գ», «թ», «ժ» և «ժա» կետերով սահմանված գործառնություններից որևէ մեկի իրականացման հետ.

դ) Բանկի կողմից Բանկի հետ կապված անձի նկատմամբ ստանձնած պարտավորությունների մասին.

ե) Բանկի՝ միանման քաղաքականություն իրականացնող բաժնետերերի խմբերի ստեղծմանն ուղղված պայմանագրերի առկայության մասին, ինչպես նաև Բանկի՝ այդ պայմանագրերի կողմ հանդիսացող բաժնետերերի անունները (անվանումները).

զ) Բանկի հաշվեկշռում արտացոլված գույքի նկատմամբ Բանկի գույքային իրավունքները հավաստող փաստաթղթերի, ընդհանուր ժողովի և կառավարման այլ մարմինների հաստատած Բանկի ներքին ակտերի, Բանկի տարածքային (առանձնացված) ստորաբաժանումների կանոնադրությունների, Բանկի կողմից պետական կառավարման մարմիններին ներկայացվող ֆինանսական ու վիճակագրական հաշվետվությունների, Ընդհանուր ժողովի, Խորհրդի, վարչության միստերի արձանագրությունների, Կենտրոնական բանկի կողմից իրականացված վերստուգումների եզրակացությունների պատճենները, Կենտրոնական բանկի կողմից Բանկի և (կամ) Բանկի ղեկավարի նկատմամբ կիրառված պատժամիջոցների վերաբերյալ Կենտրոնական բանկի որոշումների պատճենները, ներքին աուդիտի ղեկավարի կողմից Բանկի խորհրդին և վարչության նախագահին (վարչությանը) ներկայացված հաշվետվությունների պատճենները.

է) այն իրավաբանական անձանց ցանկը, որոնց Կանոնադրական հիմնադրամում Բանկի ղեկավարները կամ նրանց հետ փոխկապակցված անձինք ունեն 20% և ավելի մասնակցություն կամ հնարավորություն՝ ներագդելու նրանց որոշումների վրա:

Սույն կետի համաձայն՝ Բանկի բաժնետիրոջ ստացած տեղեկությունները նրա կողմից չեն կարող փոխանցվել այլ անձանց, ինչպես նաև դրանք չեն կարող օգտագործվել Բանկի գործարար համբավը արատավորելու, Բանկի բաժնետերերի կամ հաճախորդների իրավունքներն ու օրինական շահերը խախտելու կամ նմանատիպ այլ նպատակներով: Հակառակ դեպքում նրանք ենթակա են

պատասխանատվության՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով և նորմատիվ իրավական այլ ակտերով սահմանված կարգով:

Սույն կետով սահմանված տեղեկությունները Բանկի բաժնետիրոջը տրամադրվում է վերջինիս գրավոր դիմումի հիման վրա՝ այն ստանալուց հետո 7 օրյա ժամկետում: Բանկի բաժնետիրոջը տրամադրվող տեղեկությունները պետք է հաստատվեն Բանկի գործադիր տնօրենի և գլխավոր հաշվապահի ստորագրություններով և Բանկի կլոր կնիքով:

18.5 Բանկի խորհրդի անդամների, Գործադիր տնօրենի-վարչության նախագահի, գլխավոր հաշվապահի վերաբերյալ, ինչպես նաև խորհրդի անդամների թեկնածուների վերաբերյալ Բանկի բաժնետերերին բացահայտվող տեղեկատվությունը պետք է ներառի նաև՝

ա) նրանց ազգանունը, անունը, ծննդյան տարին, ամիսը, ամսաթիվը.

բ) մասնագիտությունը և կրթությունը.

գ) վերջին 10 տարվա ընթացքում զբաղեցրած պաշտոնները.

դ) տվյալ պաշտոնում (ընտրվելու) նշանակվելու տարին, ամիսը, ամսաթիվը և պաշտոնից ազատվելու տարին, ամիսը, ամսաթիվը.

ե) տվյալ պաշտոնում վերընտրվելու քանակը.

զ) Բանկի բաժնետեր հանդիսացող խորհրդի անդամին, Գործադիր տնօրենին - վարչության նախագահին, գլխավոր հաշվապահին կամ խորհրդի անդամի թեկնածուին և նրանց հետ փոխկապակցված անձանց պատկանող՝ Բանկի քվեարկող բաժնետոմսերի քանակը.

է) տեղեկություններ այն իրավաբանական անձանց մասին, որոնցում տվյալ անձը զբաղեցնում է ղեկավար պաշտոններ.

ը) փոխհարաբերությունների բնույթը Բանկի և Բանկի հետ կապված անձանց հետ:

18.6 Բանկն իրավունք չունի իր գովազդներում, հրապարակային օֆերտայում կամ իր անունից արված որևէ հայտարարության մեջ օգտագործելու ապակողմնորոշող այնպիսի տեղեկություններ կամ այլ անձանց կողմից Բանկի վերաբերյալ կատարված հայտարարություններ, որոնք կարող են թյուր ենթադրության տեղիք տալ Բանկի ֆինանսական վիճակի, ֆինանսական շուկայում նրա զբաղեցրած դիրքի, հեղինակության, գործարար համբավի կամ իրավական կարգավիճակի վերաբերյալ:

18.7 Բանկի կողմից, սույն բաժնի համաձայն, հրապարակվող կամ տրամադրվող տեղեկությունները պետք է լինեն ամբողջական և արժանահավատ:

ԲԱԺԻՆ 19. ԲԱՆԿԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

19.1 Բանկի ղեկավարներն իրենց պարտականությունների կատարման ընթացքում պետք է գործեն՝ ելնելով Բանկի շահերից, իրականացնեն իրենց իրավունքները և կատարեն Բանկի նկատմամբ իրենց պարտականությունները բարեխիղճ ու ողջամիտ կերպով:

Եթե Բանկի խորհրդին ներկայացվող հաշվետվությունները բացահայտում են օրենքների, այլ նորմատիվ իրավական և Բանկի ներքին իրավական ակտերի խախտումներ, ապա Խորհուրդը պարտավոր է ձեռնարկել միջոցներ այդ խախտումների վերացման և հետագայում չկրկնման ուղղությամբ:

19.2 Բանկի ղեկավարները Բանկի առջև պատասխանատվություն են կրում իրենց դիտավորյալ գործողությունների (անգործության) հետևանքով Բանկին պատճառված իրական վնասի համար՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն: Եթե Բանկին վնաս պատճառած արարքն իրականացրել են Բանկի մեկից ավելի ղեկավարներ, ապա նրանք Բանկի առջև կրում են համապարտ պատասխանատվություն: Բանկին հասցված վնասի համար պատասխանատվությունից ազատվում են Բանկի այն ղեկավարները, որոնք Բանկին վնաս պատճառած որոշման ընդունմանը դեմ են քվեարկել կամ նիստին ներկա չեն գտնվել:

19.3 Անձն ազատվում է Բանկին պատճառված վնասի համար պատասխանատվությունից, եթե գործել է բարեխիղճ՝ այն համոզմունքով, որ իր գործողությունները ելնում են Բանկի շահերից:

Մասնավորապես՝

ա) եթե ողջամիտ գործարար տրամաբանությունից ելնելով՝ կայացվել են որոշումներ, նույնիսկ եթե դրանք Բանկին հետագայում հասցրել են այնպիսի վնասներ, որոնց առաջացումն այդ որոշումն ընդունելիս հստակորեն հաշվի է առնվել որպես բիզնես ռիսկ.

բ) եթե ղեկավարի կամ այլ աշխատակիցների կողմից սխալ կամ թերի որոշումների ընդունումը եղել է բարեխիղճ՝ առանց վնաս պատճառելուն հատկապես ուղղված միտման, և եթե այդ որոշումների ընդունմամբ չեն խախտվել օրենքների կամ այլ իրավական ակտերի պահանջները:

ԲԱԺԻՆ 20. ԲԱՆԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

20.1 Բանկի գործունեությունը դադարում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով լուծարմամբ (Ընդհանուր ժողովի որոշմամբ, բանկային գործունեության լիցենզիան անվավեր կամ

ուժը կորցրած ճանաչվելու, «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» ՀՀ օրենքով և օրենքներով նախատեսված այլ սահմանված դեպքերում): Բանկի գործունեությունը դադարում է նաև միացման միջոցով վերակազմակերպման դեպքում:

20.2 Ընդհանուր ժողովն իրավունք ունի որոշում կայացնելու Բանկի լուծարման մասին, եթե Բանկն ավանդատուների, բանկային հաշիվների տերերի, ինչպես նաև դրամական (փողային) փոխանցումների գործարքներում պարտատեր հանդիսացող անձանց նկատմամբ չունի պարտավորություններ:

20.3 Բանկի արտոնյալ բաժնետոմսերի լուծարային արժեքը կազմում է արտոնյալ բաժնետոմսերի անվանական արժեքի 100%-ը:

20.4 «Բանկերի և բանկային գործունեության» մասին ՀՀ օրենքի 72-րդ հոդվածով սահմանված հիմքերի վերաբերյալ դատարանի կամ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի համապատասխան որոշում կայացնելու պահից առնվազն 5-օրյա ժամկետում Բանկում ստեղծվում է լուծարային հանձնաժողով, որը բաղկացած է առնվազն 3 անդամից և որի նախագահ և անդամ կարող են լինել ՀՀ կենտրոնական բանկի կողմից համապատասխան որակավորում ստացած անձինք: Մինչև լուծարային հանձնաժողովի ձևավորումը լուծարային հանձնաժողովի լիազորություններն իրականացնում է Բանկի գործադիր տնօրեն-վարչության նախագահը: Լուծարային հանձնաժողովը պարտատերերի պահանջները բավարարում է «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 75.1 հոդվածով սահմանված հերթականությամբ:

Լուծարային հանձնաժողովը միջոցներ է ձեռնարկում բանկի ակտիվները (գույքը) առավել շահավետ իրացնելու համար՝ հրապարակային սակարկությունների միջոցով:

Լուծարման գործընթացում բանկի պարտատերերի պահանջները բավարարելուց հետո, Բանկի լուծարային միջոցների բաշխումը մասնակիցների միջև, դրանց անբավարարության դեպքում, իրականացվում է նրանց պատկանող բաժնետոմսերի քանակին համամասնորեն:

ԲԱԺԻՆ 21. ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼԸ

21.1 Սույն կանոնադրության մեջ լրացումներ և փոփոխություններ կատարվում են, ինչպես նաև սույն կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատվում է բանկի բաժնետերերի Ընդհանուր ժողովում՝ ձայների 3/4-ով ընդունված որոշմամբ:

21.2 Սույն կանոնադրության փոփոխություններն ու լրացումները ուժի մեջ են մտնում Կենտրոնական բանկում գրանցվելու պահից:

21.3 ՀՀ օրենսդրության փոփոխության դեպքում, մինչև համապատասխան փոփոխությունների կատարումը, սույն կանոնադրությունը գործում է այնքանով, որքանով չի հակասում տվյալ պահին գործող օրենսդրությանը: